



Foreign Language Teaching and Research Press (Beijing)

Գրքի հրատարակությունն իրականացվել է
«Օտար լեզուների ուսուցման եւ հետազոտությունների
հրատարակչության» (Պեկին, Չինաստան) աջակցությամբ:



中华思想文化术语
第5辑, 亚美尼亚语版

**Key Concepts in Chinese
Thoughts and Culture**

(Volume 5, Armenian Version)

Translator - Astghik Atabekyan

Stepanakert 2018

**ՉԻՆԱԿԱՆ ՄՏՔԻ
ԵՎ ՄՇԱԿՈՒՅՈՒ
ՀԻՄՆԱԿԱՆ
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

հատոր 5

Թարգմանիչ՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆ

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

Չ 590

«Գեդարմ» հանդեսի մատենաշար

Չ 590 Չինական մտքի և մշակույթի հիմնական

հասկացություններ: Հատոր 5:

Թարգմ. անգլ.՝ Ա. Աթաբեկյան:

Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2018, 136 էջ

Հայ ընթերցողներին է ներկայացվում չինական միտքն ու մշակույթը հատկանշող հիմնական հասկացությունների հնգհատորյա հանրագիտարանի վերջին՝ հինգերորդ գիրքը: Հատորաշարն աննախադեպ ու բազմաձևավալ մի աշխատություն է, որ հետաքրքիր ու օգտակար կարող է լինել ոչ միայն փորձագետների եւ «Երկնատակի» երկրի սիրահարների համար, այլեւ կգրավի բոլոր նրանց ուշադրությունը, ովքեր ցանկանում են իրենց համար բացահայտել չինական ժառանգության նշանակությունը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Original Chinese-English Text

© Foreign Language Teaching and Research Publishing Co.,Ltd.(FLTRP)

Armenian Translation © Foreign Language Teaching and Research Publishing Co.,Ltd.

All rights reserved.

ISBN 978-9939-1-0720-2

ՀՏԴ 1/14:008

ԳՄԴ 87+71

© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար, 2018/

**Չինական մտքի և մշակույթի
հիմնական հասկացություններ.
թարգմանական և հաղորդակցական նախագիծ**

Խորհրդատուներ

Լի Սյուեցին
Ֆլորդնա Չյա-ին

Լին Ուսուն
Յե Ջան Ցիջի

Փորձագետների խորհուրդ

Ղեկավար

Հան Ջեն

Անդամներ

Չաո Ֆուլին, Չեն Դեջան, Չեն Սինմին, Ֆեն Ջիվեյ, Հան Չինթայ, Հուան Յուի, Չին Յուանփու, Լի Չիանչժուն, Լի Չաոզո, Լոու Յուլի, Մա Ցյանֆեյ, Նե Չանշուն, Փան Գունքայ, Վան Բո, Վան Նին, Յե Լան, Յուան Չիսի, Յուան Սինփեյ, Ջան Լիվեն, Ջան Սիփին, Ջեն Շուփու

Չինագետներ

Ալիթո Գայ Սալվատորե, Ռոջեր Թ.Էյմս, Մարթին Ջ.Փաուլըրս, Բ.Ր.Դիփակ, Վոլֆգանգ Քուբին, Հարի Անդերս Յենսոն, Փոլ Քրուք, Մայքլ Քրուք, Դոն Սթար, Ջան և Այվրն Ուոլզ, Չարլզ Ուիլմեն

Գիտական խորհուրդ

Բայ Ջենքույ, Ցայ Լիցզյան, Չեն Հայյան, Չեն Շաոմին, Ֆու Ջիբին, Գուո Սիաոդոն, Մայքլ Հոար, Հե Շիձյան, Հու Հայ, Հու Չժիֆեն, Հուան Չունյան, Չյա Դեջուն, Չյան Հայլոնգ, Չյան Հաոշու, Լի Ցունչան, Լի Չինլին, Լի Սյուեթաո, Լին Ման-Չիու, Լյու Ցին, Լյու Ջեն, Լյու Յուհուա, Մեն Սինյուան, Մեյ Ցուան-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

յուե, Մեն Ցիննան, Թորսթըն Փեթթերզ, Ջոշուա Մեյսոն, Ցյաո Յուն, Ռեն Դայուան, Շեն Վեյսին, Լինեթ Շի, Սուն Յիֆեն, Թաո Լիցին, Թուն Սյաոհուա, Վան Գանի, Վան Յուեյմին, Վան Քեփին, Վան Լիլի, Ուան Մինծիե, Վանգ Վեյդոն, Վեյ Յուշան, Վեն Յայմին, Վու Գենյու, Վու Ջիծյե, Սիա Չիսյուան, Սյու Մինցյան, Սյու Յանան, Սյու Ին, Յան Վենթին, Յան Սյուեծյուն, Յան Սյուեդոն, Յան Իրուեյ, Յույ Վենթաո, Յու Լայմին, Ջան Ցզյանմին, Ջան Չին, Ջան Սիյին, Ջաո Թուն, Ջեն Քայ, Ջոու Յունֆան, Ջու Լյանցի, Ջու Յուան, Յուո Լի:

այ բեմ ուեյ դա 爱人为大

Քոլորի համար հոգալն ամենաառաջնայինն է

Այլոց հանդեպ սիրալիք լինելն ու հոգատարությունն ամենակարևորն է: Հին չինացիները հավատացած էին, որ մարդ արարածներն ամենաանգինն են աշխարհում, ուստի բարյացակամ մարդիկ հոգում են ուրիշների համար: Ինչ վերաբերում է երկիրը կառավարելուն, ապա կառավարչի սերն այլոց հանդեպ պետք է վերածվի ժողովրդի հանդեպ սիրո: Ժողովուրդը պետության հիմնական բաղադրիչներից է, իսկ պետության կայունությունն ու անվտանգությունը կախված է ժողովրդից: Հետևաբար, կառավարչի առաջնային խնդիրը պիտի լինի սիրով վերաբերվել, նրբանկատ լինել իր ժողովրդի հանդեպ, մշտապես հեշտացնել նրա կյանքը և կատարել ժողովրդի կամքը: Քաղաքականությունը, օրենքներն ու սահմանակարգերը պիտի մշակվեն՝ հաշվի առնելով ժողովրդի շահը: Սա վերաբերում է ոչ միայն բարյացակամ կառավարման սկզբունքին, որին կողմնակից է կոնֆուցիականությունը. սա նաև այն հիմնական հղույթն է, որի հիման վրա հին ժամանակներում օրենսդիրները մշակում ու ընդունում էին երկիրը կառավարող քաղաքականություն և օրենքներ: Գաղափարն ամփոփում է չին ժողովրդի մարդասիրական զգացումները:

Մեջբերումներ.

Եթե ցանկանում եք, որ ուրիշներն էլ հոգեն ձեզ համար, նախ դուք հոգ տարեք նրանց մասին: Եթե ուզում եք, որ ուրիշները համաձայնեն ձեզ հետ, նախ դուք համաձայնության եկեք նրանց հետ: (*«Տրամասություններ պեկոնգյուն»*)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ների կառավարման մասին»)

Առաքինի մարդիկ տարբերվում են սովորական մարդկանցից նրանով, որ այլ կերպ են մտածում: Նրանք երբեք չեն մոռանում բարեգործության և վայելչության մասին: Բարեգործ մարդիկ հոգում են այլոց մասին, իսկ բարեկիրք մարդիկ հարգանքով են վերաբերվում իրար: Այլոց մասին հոգ տանող մարդիկ մշտապես ուրիշների հոգածության ներքո են. այլոց հարգանքով վերաբերվողները մշտապես արժանանում են համընդհանուր հարգանքի: (*«Մենցիոս»*)

Մարդկանց համար հոգալը հին ժամանակներում երկրի կառավարման կարևորագույն գործոններից էր: (*«Ծեսերի գիրքը»*)

անփին-լեդաո 安贫乐道

Գոհացիր պարզ, բայց առաքինի կյանքով

Աղքատության մեջ ապրող մարդը պետք է կառչի բարոյական սկզբունքներին: Կոնֆուցիոսն ու կոնֆուցիական գիտնականները հավատացած են, որ բարոյական սկզբունքները պիտի պահպանվեն՝ ոչ հանուն փառքի ու հարստության: Փոխարենը, դրանց պահպանումը բխում է մարդու սրտից ու արտացոլում նրա ձգտումները ողջ կյանքի ընթացքում: Ուստի բարձր բարոյական չափանիշներով առաջնորդվողները երբեք չեն ձգտի հարստության ու փառքի արդարության հաշվին. նրանք կհամապատասխանեն այդ չափանիշներին, նույնիսկ եթե ապրեն աղքատության մեջ:

Մեջբերումներ

Կոնֆուցիոսն ասում էր. «Յանհույն իսկապես առաքինի է: Նա ուտում է հասարակ ճաշատեսակներ, խմում միայն

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

սառը ջուր և ապրում անշուք պայմաններում: Եթե ուրիշների համար այսպիսի կյանքն անտանելի է, Յանհույը շարունակում է ուրախ ապրել: Ի՞նչ առաքինի մարդ է: («Անալեկյաներ»)

Յիգունը հարցրեց. «Մարդը չի հաճոյանում ուրիշներին, երբ աղքատ է, և չի գոռոզանում, երբ հարուստ է: Ի՞նչ կարծիքի եք այս մարդկային որակի մասին»: Կոնֆուցիոսը պատասխանեց. «Հրաշալի է: Բայց շատ ավելի լավ է լինել աղքատ ու ազնիվ և հարուստ ու քաղաքավարի»: («Անալեկյաներ»)

բա յին քե սիե 八音克谐

Ութ հնչյունների ներդաշնակ համադրություն

Տարբեր հնչյունները, որոնք արձակվում են միաժամանակ հնչող ոսկյա, քարե, հողե, կաշվե, մետաքսե, փայտե, դդումից ու բամբուկից ութ երաժշտական գործիքներից, ստեղծում են ներդաշնակ երաժշտություն: Եզրույթը «Պատմության գրքից» է: Այն ընդգծում է, որ ութ երաժշտական գործիքների տարբեր մեղեդիները պիտի ներդաշնակորեն միաձուլվեն՝ ստեղծելով գեղեցիկ երաժշտություն. գաղափարը վկայում է հնում չինական երաժշտության ոլորտում ներդաշնակության ձգտելու փաստը: Երաժշտությունն արտահայտում է ժողովրդի զգացողությունները. ութ տարբեր հնչյունները կապվում են մարդկային մտքի տարբեր շրջանակներին և դառնում լուսավորության միջոց: Եզրույթը նշանակում է, որ մարդիկ կարող են մտքի խաղաղության հասնել՝ լսելով ամենատարբեր մեղեդիներ, և մտածել ու գործել՝ ըստ նրանց հանդեպ ծեսերի ու երաժշտության պահանջների: Արտահայտությունը նաև ենթադրում է, որ տարբեր մար-

դիկ ու խմբեր կարող են արտահայտել իրենց տեսակետը, բայց պիտի ենթարկվեն ընդհանուր կանոնների՝ փոխադարձ ներդաշնակ կապերը պահելու համար:

Մեջբերումներ.

Բանաստեղծություններն արտահայտում են զգացմունքներ. երգերը երգվող բառեր են: Հինգ նոտայից կազմված մեղեդու ալիքավոր ազդեցությունը կախված է նրանից, թե այն ինչպես է երգվում. չափն ու մեղեդին պիտի ներդաշնակ լինեն հինգ նոտաների հետ: Եթե ութ տարբեր երաժշտական գործիքների հնչյունները ստեղծում են ներդաշնակ երաժշտություն՝ առանց միմյանց խանգարելու, ապա այն աստվածներին ու մարդկանց հնարավորություն է տալիս հայտնվել ներդաշնակ վիճակում: (*«Պատմության գիրքը»*)

բեյցու 北曲

Հյուսիսային օպերա

Բեյցուն (北曲)՝ Հյուսիսային օպերան, սկիզբ է առել Չինաստանի հյուսիսում: Այն հիմնված էր հյուսիսային ժողովրդական երգերի վրա, որոնք մեծ տարածում ունեին Հյուսիսային Մուն դինաստիայում կամ ավելի վաղ, իսկ դրանց խոսքերը հաճախ զվարճալի էին ու պարզ: Հարավային Մուն դինաստիայից հետո հյուսիսային Չինաստանը հայտնվեց Չին և Յուան դինաստիաների կառավարման տակ: Արդյունքում, Նյուջեն, մոնղոլական և այլ էթնիկ խմբերի երգերը, պարերն ու երաժշտական տարրերը լայնորեն ներառվեցին Հյուսիսային օպերայի ավանդույթում՝ այն վերածելով օպերայի յուրահատուկ տեսակի: Միննույն ժամանակ բազմա-

թիվ գրողներ սկսեցին հետաքրքրվել Հյուսիսային օպերայով ու գրեցին անթիվ-անհամարհրաշալի օպերային ստեղծագործություններ: Սույն ժամանակաշրջանի քնարերգության համեմատ Հյուսիսային օպերան պարզ էր, անմիջական ու անկեղծ, իսկ ռիթմի տեսանկյունից աչքի էր ընկնում ավելի մեծ ազատությամբ: Հյուսիսային օպերան կատարվում էր գերազանցապես կարճ քնարերգական բանաստեղծությունների և ցիկլերի ձևով: Քանի որ դրանք անդրադառնում էին զանազան հասարակական թեմաների, գեղարվեստական այս ձևով կատարվող օպերաներն անվանում էին *ցաշու* (杂剧 զանազան թեմաներով օպերա): Յուան դինաստիայում գրողներն ունեին ցածր հասարակական կարգավիճակ, ուստի գրում էին մեծ թվով հյուսիսային օպերային ստեղծագործություններ, որոնցով արտահայտում էին իրենց զգացմունքներն ու տեսակետները: Այս ոճը ներկայացնում էին Գուան Հանցինը, Մա Ջիյուանը, Բայ Փուն ու Ջեն Գուանցուն, որոնց ընդհանուր անվանում էին Յուան օպերայի հեղինակների լավագույն քառյակ:

Մեջբերումներ

Սույն դինաստիայի պոեզիան և հարավային և հյուսիսային օպերաները, որոնք լայն տարածում ունեին Չին ու Յուան դինաստիաներից սկսած, անտիկ ժամանակների երաժշտություն չէին, բայց բաժանված էին ըստ նոտաների՝ Գո Ռե, Մի, Սոլ և Լյա: Ոմանք կատարում էին այս երգերը, իսկ հանդիսատեսը կարող էր ասել՝ հանգը ճիշտ է, թե ոչ: Իրականում նպատակը անտիկ երաժշտությունը ժամանակակից երաժշտության հիման վրա վերականգնելը և տարածված երաժշտություն մշակելն էր... Հանգը գնահատվում էր երգեցողության միջոցով, ապա երաժշտական գործիքների հնչո-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դուքունը որոշվում էր՝ ըստ ստանդարտ հանգավորման, և սա հնարավորություն էր տալիս վերականգնել Սյա, Շան և Ջոու դինաստիաների երաժշտությունը: (Յիու Ջուն. «Մեծ ուսման լրացուցիչ մեկնաբանություն»)

Միայն երկու մարդ էր երգում ներկայացման ընթացքում: Մեկը տղամարդու կերպար էր, մյուսը՝ կնոջ: Երբ միանում էին մյուս գործող անձինք, նրանք միայն խոսում էին: Քանի որ չէին երգում, կոչվում էին լրացուցիչ կատարողներ: Երգում էին առաջատար կատարողները, իսկ խոսողները միայն լրացուցիչ դեր էին կատարում: Մինչ Յուան դինաստիայի ուշ շրջան և Մին դինաստիաների սկիզբը, սակայն, այս պրակտիկան փոխվեց Հարավային օպերայի ազդեցության արդյունքում. բոլոր կատարողները երգում էին, և այլևս չկար առաջատար-լրացուցիչ դերերի տարբերակում: (Մաո Ցիլին. «Մաո Ցիլինի դիպրարկումները պոեզիայի մասին»)

բին ցյան ցե միե 兵强则灭

Ուժի վրա հույս դնելն ու սեփական գերազանցությունը ցուցադրելը հանգեցնում է կործանման

Ուժի վրա հույս դնելն ու սեփական գերազանցությունը ցուցադրելը հանգեցնում է կործանման: Մա անտիկ չինացի փիլիսոփա Լաոցզիի *չոու բոու* հասկացության (守 պահպանել, 柔 նրբություն, մեղմություն) կոնկրետ մարմնավորումն է: Լաոցզին հավատացած էր, որ յուրաքանչյուր առարկա/օբյեկտ ունի երկու կողմ՝ ինչպես ամրություն, այնպես էլ քնքշություն, ինչպես ուժ, այնպես էլ՝ թուլություն: Այս երկու կողմերը բացարձակ չեն, բայց որոշակի պայմաններում կարող են փոխարինվել մեկը մյուսով: Սակայն վերջնական արդյունքում իրերը/երևույթները, որոնք ամուր ու ուժեղ են

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

երևում, իրականում արդեն իսկ հասել են իրենց բարձրակետին, մինչդեռ իրերը/երևույթները, որոնք մեղմ ու թույլ են թվում, միևնույն է, լի են կենսունակությամբ ու եռանդով և դեռ կարող են առաջ սլանալ. ահա այսպես էլ պետությունները, որոնք հույսը դնում են ուժի վրա և ամենուր ցուցադրում իրենց գերազանցությունը, ի վերջո գնում են դեպի սեփական կործանում: Մրանից կարելի է հետևություն անել, որ պետություն կառավարելիս կամ միջանձնային հարաբերությունները կարգավորելիս երբեք պետք չէ չափից դուրս համառ լինել և հալածել թույլերին: Փոխարենը, անհնազանդին պետք է նվաճել մեղմորեն, լինել աննկուն, բայց մեղմաբար, ուժը գործածել ներողամտությամբ. միայն այդ դեպքում կարելի է հասնել կայունության ու ներդաշնակության:

Մեջբերումներ.

Երբ մարդը ողջ է, նրա մարմինը փափուկ է ու թույլ: Երբ վրա է հասնում մահը, այն դառնում է պիրկ ու կարծր: Երբ խոտն ու ծառերը շնչում են, փափուկ են ու փխրուն: Երբ մոտենում են վախճանին, դալկանում են ու թուլանում: Հետևաբար, պինդն ու կարծրը գնում են դեպի մահ, փափուկն ու թույլը՝ դեպի կյանք: Ուստի, եթե բանակը ցուցադրում է իր ուժը, ուրեմն շուտով կկործանվի, իսկ երբ ծառն ամրանում է, ճաք է տալիս: (*«Lungqih»*)

բոշի-ձիջուն 博施济众

Մեծ բարիք բաշխիր մարդկանց ու թեթևացրու աղքատների տառապանքը

Մարդկանց համար մեծ բարիք գործելը և աղքատների տառապանքը թեթևացնելն առանցքային նշանակություն ու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

նի լավ կառավարման համար: Սկզբունքը կառավարչից պահանջում է բարեհաճորեն վերաբերվել իր ենթականերին, արձագանքել մարդկանց կարիքներին ու դժվարություններին և մեծ օգուտ բերել նրանց: Նման կառավարիչն արժանի է իմաստուն կոչվելու:

Մեջբերումներ.

Յիգունը հարցնում է. «Եթե կառավարիչը մեծ օգուտ է տալիս իր ժողովրդին ու թեթևացնում աղքատների տառապանքը, ինչպե՞ս ես գնահատում նրան: Համարո՞ւմ ես բարեգործ ու առաքինի»: Կոնֆուցիոսը պատասխանում է. «Նա ոչ միայն բարեգործ է ու առաքինի: Ես նրան իմաստուն կկոչեի: Նույնիսկ Յաոյի ու Շունի նման առաքինի կառավարիչները չեն հասնի նրան»: (*«Անաշեկյուններ»*)

բույանջիճյաո 不言之教

Ազդիր այլոց վրա՝ առանց քարոզելու

Լաոցզին կարծում էր, որ «առանց քարոզելու ուրիշների վրա ազդեցություն թողնելը» իր *վուուեյի* (无为) կամ չգործության փիլիսոփայության մի մասն էր: Հին ժամանակներում կառավարիչները հրամաններ ու հրահանգներ էին տալիս՝ այնպես ձևավորելով իրենց ենթակաների խոսքը, մտքերն ու վարքագիծը, որպեսզի նրանք համապատասխանեն քաղաքավարության կանոններին: Լաոցզին դեմ էր անմիջական գործողության այս տեսակին, քանի որ հավատացած էր, որ սեփական կամքը ժողովրդին պարտադրելու փոխարեն միապետը պիտի գործի դնի չգործելու ու չքարոզելու մեթոդները՝ ենթակաների բնական վիճակը պահպանելու և պաշտպանելու համար: Հետագայում եզրույթը նշանակում էր ազ-

Չինական մտքի եւ մշակույթի հինական հասկացություններ

դեցություն թողնել ուրիշների վրա և առաջնորդել՝ ըստ սեփական բարոյական վարքագծի:

Մեջբերումներ

Հետևաբար, իմաստունը զբաղվում է աշխարհիկ հարցերով չ-գործության միջոցով, և ուրիշների վրա ազդում է առանց քարոզելու: («*Luangqih*»)

Զչերը կարող են սովորեցնել առանց քարոզելու, և բարիք բաշխել՝ առանց գործելու: («*Luangqih*»)

ցան ֆու յու մին 藏富于民

Հարստությունը ժողովրդի ձեռքում պահիր

Հարստությունը ժողովրդի ձեռքում պահելու գաղափարը երկար ժամանակ եղել է չինական քաղաքական տնտեսության մաս: Յին դինաստիայից առաջ կոնֆուցիական, մոհիստական, դաոսական և լեզալիստ գիտնականները, ինչպես նաև ռազմական ստրատեգները մեկնաբանել են այս թեման: Ենթադրվում է, որ կառավարիչը պիտի լինի տնտեսող և չմրցի ժողովրդի հետ հանուն օգուտի ու նաև չհավշտակի նրա հարստությունը: Պետք է որդեգրել քաղաքականություն, որի առանցքում ժողովրդի հանդեպ մեծահոգության գաղափարն է, ինչը մարդկանց թույլ կտա ու կքաջալերի հարստանալ արդար միջոցներով: Այս ամենի հիմքում այն ենթադրությունն է, որ հարուստ հասարակությունն ու հարուստ պետությունը միևնույն բանն են: Հարուստ ժողովուրդը պետության հարստության հիմքն է, ինչպես նաև պետության՝ համընդհանուր աջակցության արժանանալու հիմնարար երաշխիքը: Պետության հարստությունը կախված է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ոչ միայն ունեցվածքից, այլև ժողովրդի աջակցությունից: Սա «ժողովուրդը՝ առաջին տեղում» հասկացության շարունակությունն է, իսկ մեր օրերում հարստություն ժողովրդի ձեռքում պահելու գաղափարն արդի քաղաքակրթության բնորոշ գծերից մեկն է:

Մեջբերումներ.

Պետությունը հաջողությամբ կառավարող մարդը միշտ նախ կհարստացնի իր ժողովրդին, ապա կմտածի նրանց կառավարելու մասին: (*«Գուանցի»*)

Եթե ժողովրդից գանձվող հարկերը սահմանափակ լինեն, և այդ հարկերի կիրառումը վերահսկվի, նույնիսկ փոքր պետությունը կապրի կայունության մեջ: Եթե ժողովրդից գանձվող հարկերը սահմանափակ չլինեն և դրանց ծախսը չվերահսկվի, պետությունը, նույնիսկ եթե այն մեծ է, կկանգնի լուրջ վտանգի առաջ: (*«Գուանցի»*)

Լավ պետական կառավարիչը թույլ կտա, որ հարստությունը մնա ժողովրդի ձեռքում: (*«Երեք թագավորությունների պատմությունը»*)

չեն ջու յու սյուն 成竹于胸

Բամբուկ նկարելուց առաջ երևակայիր ամբողջական պատկերը / Մտքում ունեցիր լիարժեք ձևավորված պատկեր

Եզրույթը նշանակում է գեղարվեստական արարումից առաջ մտքում ունենալ գեղարվեստական պատկեր: Սա մտավոր երևակայության օգտագործումն է արվեստի գործ ստեղծելու ընթացքում, ինչպես նաև պահանջում է թե՛ գե-

դարվեստական վարպետություն, թե՛ արհեստավարժ մոտեցում: Գեղագիտական պատկեր ստեղծելու համար արվեստի գործ արարողը մտքում պիտի միավորի գաղափարներ, զգացմունքներ, մտադրություններ ու օբյեկտներ: Երբ գեղարվեստական կոնցեպտուալիզացիան պատրաստ է, ֆիզիկական նյութերի հետ և տեխնիկայի համադրությամբ ստեղծվում է շոշափելի գործ: Վարպետ դիզայները շեշտը դնում է հիմնականում ռացիոնալ մտածողության վրա, իսկ վերախմբագրումները թույլատրելի են: Նախապես լիարժեք ձևավորված պատկերն իդեալական վիճակ է:

Մեջբերումներ

Այսպիսով, բամբուկ նկարելիս պետք է նախ մտքում ունենալ բամբուկի լիարժեք պատկերը: Նախ վերցրեք գրիչը՝ միևնույն ժամանակ ուշադիր ուսումնասիրելով բամբուկը. միայն այդ դեպքում բամբուկը, որը ցանկանում եք նկարել, կհայտնվի մտքում: Հետո, ցատկող նապաստակի կամ սավառնող թռչնի արագությամբ վերցնեք գրիչը ու մի շնչում նկարեք պատկերը: Հերիք է մի կարճատև դադար, և բամբուկի պատկերը կկորչի: (Սու Շի. «*Էսսե Ուեն Յուքի «Բամբուկների հովիտ» նկարի մասին»*)

Երբ Ուեն Յուքը բամբուկ է նկարում, նա արդեն մտքում ունի դրա լիարժեք պատկերը: Երբ Ջեն Բանցյաոն է բամբուկ նկարում, մտքում չունի դրա լիարժեք պատկերը: Նրա բամբուկը կարող է լինել մուգ կամ գունատ, տերևները՝ խիտ կամ նոսր, արմատները՝ կարճ կամ երկար, հաստ կամ բարակ. բոլորն էլ նկարված են ինքնաբուխ՝ իրենց սեփական ձևով, և ամբողջությամբ ցուցադրում են դրա կառուցվածքն ու հմայքը: (Ջեն Բանցյաո. «*Դիրարկումներ «Բամբուկներ նկարելու» մասին»*)

չուան շեն սիե ջաո 传神写照

Քացիր հոգին և պատկերի մարդուն

Եզրույթը վերաբերում է կերպարների գրական նկարագրություններին, որոնք ճշգրիտ են թե՛ ձևով, թե՛ ոգով: *Չուան շեն* (传神), «բացել/հաղորդել հոգին» նշանակում է կերպարի մեջ լիարժեք արտահայտել հոգևոր աշխարհը, որպեսզի այն ի կյանք կոչվի. սիե ջաո (写照) «պատկերել մարդուն» նշանակում է ստեղծել նրա վառ ֆիզիկական պատկերը: Այս արտահայտություններն ի սկզբանե օգտագործվում էին արվեստի քննարկումներում, բայց հետագայում ներմուծվեցին գրական դաշտ: Դրանք ներկայացնում են գեղարվեստական վիճակ, որին նկարիչներն ու գրողները ձգտում են, երբ ստեղծում են մարդկանց պատկերներ, ինչպես նաև գեղարվեստական պատկերներ:

Մեջբերումներ

Գեղարվեստական վարպետության բարձունքը կախված չէ նրանից, թե արդյոք ֆիզիկական պատկերը լավ է ներկայացված, թե ոչ: Փոխարենը, կարևորը աչքերն են, որ արտահայտում են հոգու բովանդակությունը ու ներկայացնում մարդուն: (Լիու Յիցին. «*Աշխարհի հեքիասքների նոր ժողովածու*»)

Մեծ գրողների նուրբ հնարքներից է՝ միտումնավոր փոխել թեման կամ ինչ-որ կիսատ ասելիք թողնել: Եթե մի միտքը ծնունդ է տալիս մյուսին, հեղինակը միտումնավոր ձեռնպահ է մնում դրանից, և փոխարենը անցնում է այլ նկարագրությունների կամ պատումների՝ այսպիսով ստեղծելով դատարկ տարածություն, որը հաղորդում է հոգու բովանդակու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունը և պատկերում մարդուն: Այսպիսով, լիրիկական արտահայտությունը դառնում է շատ ավելի ակնառու ու ճշմարտացի: (Լիու Սիցայ. «*Գրական տեսությունների համայնապատկեր*»)

Լու Ջիշենի պատկերը, որը ներկայացնում է հեղինակը, ճշմարտաման է նույնիսկ հազարավոր տարիներ անց: Նա իսկապես վարպետ է, որն ի գործ է հաղորդել հոգու բովանդակությունը ու պատկերել մարդուն: («Լի Ջիի. ծանոթագրությունները «*Ճահնի ավազակները*» գործի մասին)

չունձիե 春节

Գարնան փառատոն

Սա չին ազգի և Չինաստանի սահմաններից դուրս ապրող չինացիների ամենակարևոր ավանդական փառատոնն է: Նեղ իմաստով Լուսնային նոր տարվա առաջին օրն է: Լայն իմաստով այն փառատոնն է, որը տեղի է ունենում վերջին լուսնային ամսվա 23-րդ օրվա (Խոհանոցի աստծո նվիրաբերության օրը) և առաջին լուսնային ամսվա 15-րդ օրվա (Լապտերի փառատոն) միջև: Ժամանակային իմաստով, Գարնան փառատոնը նոր տարվա սկզբի և ըստ լուսնային օրացույցի՝ Գարնան մեկնարկի միաձուլումն է: Գարնան փառատոնի ընթացքում մարդիկ հարգանքի տուրք են մատուցում աստվածներին և իրենց նախնիներին, ներկայացնում գովաբանական երկտողեր ու ամանորյա նկարներ, ամանորյա ապրանքներ գնում ու նոր հագուստ հագնում, ճաշի սեղանի շուրջ հավաքում ընտանիքի բոլոր անդամներին, երեխաներին գումար տալիս նվերների համար, ամբողջ գիշեր արթուն մնում Նոր տարվա նախօրեին ու հրաժեշտ տալիս անցնող տարուն, հրավառություն անում ու այցի

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

զնում հարազատներին ու ընկերներին: Ինչ վերաբերում է ընտանեկան հարաբերություններին և կրոնին, ապա մարդիկ զոհ են մատուցում նախնիներին ու աստվածներին՝ խնդրելով պաշտպանել ընտանիքի անդամներին: Բացի դրանից, Գարնան փառատոնն արտացոլում է այն գաղափարը, որ չինացի ժողովուրդը մեծ կարևորություն է տալիս ընտանեկան հավաքույթներին, ընտանիքի ու հարազատության շրջանում ներդաշնակությունը: Ինչ վերաբերում է չին ժողովրդի՝ կյանքի ու ժամանակի զգացողությանը, նրանք ոչ միայն հրաժեշտ են տալիս անցնող տարուն ու դիմավորում նոր տարին, այլև բարձրաձայնում են ավելի լավ ապագայի իրենց ակնկալիքները: Չինական մշակույթի ազդեցության ներքո Չինաստանի սահմանակից երկրներից մի քանիստն նույնպես նշում են Գարնան փառատոնը:

Մեջբերումներ.

Տարին հեռանում է հրավառության ձայների ներքո, և տաք զեփյուռն օգնում է, որ գինին խմորվի: Երբ արշալույսը շողշողում է հազարավոր տների վրա, բոլոր ընտանիքներում ամանորյա երկտողեր են արտասանում: (Ուան Անշի. «Նոր տարվա օրը»)

դասյուն 大学

Գասյուն / Մեծ կրթություն

Հասկացությունը տարբեր իմաստներ ունի տարբեր համատեքստերում: Ուսումնական հաստատությունների տեսանկյունից, նշանակում է բարձրագույն կրթական հաստատություն, որը հիմնադրել է պետությունը, և որը տարբերվում

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Է տեղական դպրոցներից: Կրթության բովանդակության առումով, վերաբերում է նրան, թե ինչ պիտի սովորեն դեռահասները, մասնավորապես՝ կառավարման և մարդկային հարաբերությունների ընդհանուր կանոններ ու սկզբունքներ, որոնք տարբերվում են *սիսույունեից* (小学 Փոքր կրթություն), որն իրենից ներկայացնում է բառեր ու հատուկ ծեսեր կամ հմտություններ սովորելը: Ինչ վերաբերում է նպատակին, ապա մեծ կրթության նպատակն է՝ օգնել ուսանողներին ձևավորելու կայուն անհատականություն և բարոյական կերպար, որից հետո նրանք կստանան համապատասխան որակավորում և կդառնան որակյալ պետական կառավարիչներ:

Մեջբերումներ.

Հին ժամանակներում կրթական համակարգն ուներ հետևյալ կառուցվածքը՝ փոքր դպրոց՝ նախատեսված գյուղի յուրաքանչյուր տոհմի համար, մեկ աստիճան բարձր դպրոց՝ յուրաքանչյուր 500 տնային տնտեսության համար, ևս մեկ աստիճան բարձր դպրոց՝ յուրաքանչյուր 12,500 ընտանիքի համար և դքսության մայրաքաղաքում գործող բարձրագույն կրթական հաստատություններ: Ուսանողներն ընդունվում էին ամեն տարի, քննություններն անց էին կացվում երկու տարին մեկ: Առաջին տարվա ընթացքում ուսանողներն ուսումնասիրում էին դասական գործերը և կրթության միջոցով ոգեշնչման աղբյուր գտնում: Երրորդ տարում նրանք պիտի «սուզվեին» ուսման մեջ և մտերմանային իրենց ուսանող ընկերների հետ: Հինգերորդ տարում ուսանողները ձեռք էին բերում բազմակողմանի գիտելիքներ և խորին հարգանքով վերաբերվում ուսուցիչներին: Յոթերորդ տարում ուսանողները պիտի բավականաչափ կրթված լինե-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ին և կարողանային ձևավորել ինքնուրույն դատողություն և գտնել իսկական ընկերներ. սա կոչվում էր երկրորդային ձեռքբերում: Իններորդ տարում պետք է հստակ պատկերացում ունենային այն մասին, թե ինչն է կապում տարբեր երևույթներ, լինեին ինքնավստահ և ձեռք բերեին անկախ մտածելու ունակություն՝ առանց սովորածին հակադրվելու: Սա կոչվում էր մեծ ձեռքբերում: Այսպես ձևավորված գիտնականը կարող էր կրթել մյուսներին և բարելավել հասարակական նորմերը՝ այդպիսով արժանանալով ժողովրդի հարգանքին՝ թե՛ հեռու ու թե՛ մոտ: Ահա սա է Մեծ կրթության նպատակը: («*Շեսերի գիրքը*»)

Մեծ կրթության նպատակն է՝ նպաստել բարոյական ամբողջականությանը, սերտ կապեր հաստատել մարդկանց հետ և առաքինության հասնել թե՛ խոսքում, թե՛ արարքների մեջ: («*Շեսերի գիրքը*»)

դուռ թայ հուան գու 夺胎换骨

Մահկանացուի միս ու արյունը փոխարինիր անմահի միս ու արյունով / Հին գրական երկերի գաղափարներն արտահայտիր նոր ձևով

Եզրույթը, որն արտահայտվում է մահկանացուի միս ու արյունը անմահի միս ու արյունով փոխարինելու փոխաբերությամբ, գրական տեխնիկական այն միջոցն է, երբ գրողը նոր գաղափարներ արտահայտելու համար օգտվում է սեփական բառերից՝ միևնույն ժամանակ մեջբերումներ անելով ավելի վաղ գրված գործերից: Շեշտը դրվում է անցյալից փոխառությունների վրա՝ առանց դրանց հղում անելու և միաժամանակ նոր գործ ստեղծելով: Պոեզիայում դա արվում է գլխավորապես թեման ընդգծելու նպատակով բառեր ու գա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

դափարներ փոխարինելու միջոցով. արդյունքում ստեղծվում է գեղեցիկ նոր արտահայտություն: *Դուրթայ* (夺胎) նշանակում է օգտագործել գոյություն ունեցող գաղափարը և նոր իմաստ հաղորդել նրան՝ պարզաբանելու, խորացնելու կամ լայնացնելու միջոցով: *Հուսնզու* (换骨) նշանակում է օգտագործել որևէ փայլուն գաղափար կամ զգացմունք հին գրական երկից, որը բավարար կերպով արտահայտված չէ, հղկել ու պարզեցնել այն՝ արտահայտելով ավելի համապասխան բառերով: Այս տեխնիկան փայլուն օրինակ է, թե գրականությունն ինչպես է թե՛ հավերժացում, թե՛ միաժամանակ փոխում ավանդույթը: Մշակութաբանությունը նույնպես կարող է փոխառել մեթոդը՝ անցյալի ուսումնասիրության և հետագա զարգացման համար:

Մեջբերումներ.

Հուսնզու նշանակում է օգտագործել ավելի հարմար բառեր՝ առանց վաղ շրջանի գրողի արտահայտած իմաստը փոխելու. դուրթայ նշանակում է ըմբռնել հեղինակի արտահայտած որոշակի իմաստ, ապա խորացնել այն ու ավելի լիարժեք արտահայտել: (Շի Հուիհուն. «*Երեկոյան գրույցներ Լենջայում*»)

Թեև հին գրողները բառ առ բառ չէին կրկնօրինակում վաղ գրված ստեղծագործությունները, ունեին «միսն ու ոսկորները փոխարինելու» որոշակի ձև, որը, երկաթը ոսկու վերածող կախարդական հաբի պես, ստեղծում է ավելի լավ գործեր: (Չեն Շան. «*Հանդուզն դիպարկումներ գրականության մասին*»)

Ֆա յու շի բյան, լի յու սու հուա 法与时变, 礼与俗化

**Օրենքները փոխվում են ժամանակի զարգացմանը
համընթաց. ծեսերը փոխվում են սովորույթների
փոփոխությանը զուգահեռ**

Այս եզրույթի համատեքստում «օրենքներ» բառը վերաբերում է կառավարչի վարչական հրամանագրերին, ինչպես նաև սահմանակարգերին և օրենքներին: «Ժամանակ» բառն ի սկզբանե վերաբերում էր գերիշխող հասարակական պայմաններին: «Ծեսերը» հիմնականում հասարակության բարոյական նորմերն ու վարքագծի կանոններն են: Ի լրումն հասարակական ավանդույթների ու բարքերի՝ «սովորույթները» ներառում են նաև համընդհանուր զգացմունքներ: Արտահայտությունը նշանակում է՝ քանի որ ամեն ինչ շարունակ փոխվում ու զարգանում է, սահմանակարգերը, օրենքներն ու ծեսերը պիտի համապատասխանաբար փոխվեն: Այն չի կառչում ավանդույթից, խրախուսում է նորարարությունն ու փոփոխությունը և ընդունում է այն հիմնական սկզբունքը, որ երկիրը պիտի կառավարվի ժամանակի համապատասխան և արձագանքի ժողովրդի կամքին: Սա «ժամանակի հետ համընթաց շարժվել» հասկացության մի օրինակ է, որը ներառված է «Փոփոխությունների գրքում», և նաև արձագանքում է «Ժողովուրդը՝ առաջին տեղում» հասկացությանը, որը պաշտպանում է Կոնֆուցիականությունը:

Մեջբերումներ.

Այսպիսով, հին ժամանակներում մեկից ավելի այսպես կոչված իմաստուն կառավարիչ կար: Նրանք պարզևներ էին բաժանում, տարբեր պարզևներ, մեծ ու փոքր. նրանց պա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տիժները խիստ էին կամ մեղմ, իսկ մեթոդները միշտ տարբեր էին: Պատճառն այն չէ, որ նրանք միտումնավոր փորձում էին տարբերվել իրարից, այլ որովհետև փոխվում էին ժամանակի զարգացմանը համընթաց և սովորույթների փոփոխությանը զուգահեռ: («*Գուանցի*»)

Իմաստունը մարդ է, որը գիտի՝ ինչի շնորհիվ է պետությունը հասնում կայունության, կամ ինչի պատճառով է հայտնվում խառնաշփոթի մեջ, մարդ, որը տեղյակ է սովորույթների փոփոխության մասին: Երբ իմաստունը կառավարում է, նա լիահույս է, որ միայն բարիք կգործի իր ժողովրդի համար: Հետևաբար, սահմանում է համապատասխան սկզբունքներ, չի երկրպագում անցյալը ու իրեն թույլ չի տալիս կաշել ներկայից: Նա փոխվում է ժամանակի զարգացմանը համընթաց և սովորույթների փոփոխությանը զուգահեռ: («*Գուանցի*»)

Այսպիսով, երբ իմաստունն է կառավարում, օրենքները փոխվում են ժամանակի զարգացմանը համընթաց, իսկ ծեսերը փոխափոխվում են սովորույթների փոփոխությանը զուգահեռ: Հագուստն ու գործիքները պատրաստվում են ըստ պահանջի, իսկ օրենքներն ու հրամանագրերը որդեգրվում են՝ իրական կարիքներ հոգալու նպատակով: (*Հուայնանցի*)

Ֆանցիուջուձի 反求诸己

Ներհայեցողություն (ինքնադիտողություն)

Եզրույթը վերաբերում է մարդու սեփական խոսքերի, արարքների ու ներքին մտքերի ինքնազննմանը: Ներհայեցողությունը բարոյական ինքնազարգացման մի ձև է, որն առաջ է քաշել Մենցիուսը: Մենցիուսը ժառանգել էր կոնֆուցիական այն համոզմունքը, որ մարդու բարոյական մաքրու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

թյունն ու գովելի արարքները վճռվում են՝ ըստ էթիկական զարգացման աստիճանի: Եթե նրա խոսքերը կամ արարքները չեն արժանանում ուրիշների հավանությանը կամ գնահատանքին, ուրեմն չի կարելի մեղադրել նրանց: Եվ հակառակը, մարդը պիտի ինքնազննում անի ու պարզի՝ արդյոք իր խոսքերն ու արարքները, ինչպես նաև ներքին մտքերը համապատասխանում են էթիկայի ու վայելչության չափանիշներին:

Մեջբերումներ.

Բարեգործ մարդը նման է նետաձիգի: Նետաձիգը նետն արձակելուց առաջ նախ պիտի ճիշտ դիրքավորվի: Եթե վրիպի ու չդիպչի թիրախին, ուրիշ, ավելի լավ նշանառուների մեղադրելու փոխարեն պիտի ինքնադիտարկում անի ու պարզի պատճառը: (*«Մենցիոս»*)

Եթե ուրիշները չեն հատուցում իրենց հանդեպ ձեր բարությունը, մտածեք՝ արդյոք ձեր բարությունը անկեղծ է, թե ոչ: Եթե հաջող չեք կառավարում, մտածեք՝ արդյոք ձեր կառավարման փիլիսոփայությունը հուսալի է, թե ոչ: Եթե ուրիշները չեն պատասխանում իրենց հանդեպ ձեր բարեկրթությանը, մտածեք՝ արդյոք ձեր բարեկրթությունն անկեղծ է, թե ոչ: Ամեն անգամ, երբ չի հաջողվում հասնել ցանկալի արդյունքի, ներհայեցողություն արեք, որպեսզի պարզեք պատճառը: Ազնիվ ինքնադիտարկման դեպքում բոլոր մարդիկ հավատարմության երդում կտան ձեր կառավարմանը: (*«Մենցիոս»*)

Ֆեն բոու ուեյ գու 丰肉微骨

Պարարտ մարմին և փափուկ ոսկրային համակարգ

Ի սկզբանե եզրույթը բնութագրում էր նուրբկազմվածքով, հյութեղ մարմնով և արագաշարժ կնոջ: Հետագայում այն օգտագործվում էր՝ վայելչագրության և գեղանկարչության ոլորտում գնահատականներ տալու համար և նշանակում էր, որ վրձնահարվածը շռայլ է ու եռանդուն, բայց ոսկորը (ոսկրային կառուցվածքը) թույլ է: Ոսկորը (ոսկրային կառուցվածքը) կմախքային համակարգն է, որը վկայում է վրձնի և ստեղծագործության կառուցվածքի թուլության կամ ուժի մասին: «Հյութեղ/պարարտ» բառը խորհրդանշում է, որ տողերը շքեղ են ու գրավիչ, բայց զուրկ են ուժից, կամ որ թանաքը հաստ է, իսկ գույները՝ թանձր: Հին ժամանակներում ընդգծվում էր, որ վայելչագրության նմուշը կամ կտավը պիտի ունենա ոսկոր (ոսկրային կառուցվածք) և լինի հյութեղ, իսկ ոսկորի ու մսի միջև անհրաժեշտ է համապատասխան հավասարակշռություն: Այն պիտի օժտված լինի նրբագեղությամբ, աշխուժությամբ և ուժով: Այսպիսով, «հյութեղ մարմինն ու փափուկ ոսկրային կառուցվածքը» համարվում է թերություն: Բայց երբ ոսկրային համակարգն ամուր է, իսկ մկանները՝ փափուկ, կամ երբ ոսկրային համակարգն ամուր է, իսկ մկանները՝ հարթ, սա համարվում է առավելություն: Եզրույթը, որով նախկինում բնութագրվում էր մարդու կառուցվածքը, սկսեց օգտագործվել արվեստի երկերի գնահատման մեջ՝ արտահայտելով «մարմնի մասերի միջոցով շրջակա երևույթները նկարագրելու» չինական գեղագիտական հասկացությունը:

Մեջբերումներ.

Նրբագեղ, հյութեղ ու փափուկ կազմվածքով պարուհիները հիացնում էին հանդիսատեսին իրենց կատարումներով: (Յու Յուան. «Չուցի»)

Վրձնին հմուտ տիրապետողները կարող են ստեղծել թարմ ու աշխույժ վայելչագրական նմուշներ, որոնք կարելի է համեմատել ամուր ոսկրային կազմվածքով մարմնի հետ: Իսկ նրանք, որ լավ չեն տիրապետում վրձնին, ստեղծում են միայն թանաքով նմուշներ: Աշխույժ վայելչագրական ստեղծագործությունը, որն արվում է քիչ թանաքով, կոչվում է «մկանուտ գործ», իսկ ոչ այնքան աշխույժ ստեղծագործությունը, որի համար շատ թանաք է օգտագործվել, կոչվում է «թանաքոտ խոճկոր»: Առաջինը պետք է բարձր գնահատվի, իսկ երկրորդը ցանկալի չէ: (Լեյդի Ուեյ. «Թանաքավրչնով նկար»)

գանուու 感物

Չգացական արտաքին հանգամանքներ

Մարդու ստեղծագործական խթանը ծնվում է մեկ կամ ավելի արտաքին հանգամանքների ազդեցությամբ, իսկ կոնցեպտուալիզացիայի ու գեղարվեստական մշակման արդյունքում վերածվում է արվեստի գործի: Նման արտաքին հանգամանքներից են թե՛ բնության տեսարժան վայրերը, թե՛ կյանքի տեսարանները, որոնք կարելի է անուղակիորեն զգալ: Հին չինացիները հավատացած էին, որ ստեղծագործությունը ծնվում է արտաքին հանգամանքների ազդեցությամբ, որոնք ստեղծագործելու ցանկություն են առաջացնում, և որ արվեստի ու գրականության գործերը արտա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

քին հանգամանքների և սուբյեկտիվ մտածողության համադրման արդյունք են: Եզրույթն ընդգծում է այն հիմնարար գաղափարը, որ գեղարվեստական ստեղագործությունն արմատավորվում է կյանքում:

Մեջբերումներ.

Երաժշտությունը ծնվում է մարդկանց սրտերում: Չգացմունքները ծագում են մարդկանց սրտերում արտաքին հանգամանքների դրդմամբ: Արտաքին հանգամանքները շարժում են սիրտը, հետևաբար արտահայտվում են երաժշտության միջոցով: («*Ծեսերի գիրքը*»)

Մարդիկ օժտված են յոթ զգացմունքներով՝ ուրախություն, բարկություն, տխրություն, վախ, սեր, նողկանք և ցանկություն: Տարբեր զգացմունքներն առաջ են գալիս արտաքին հանգամանքներից: Երբ արտաքին հանգամանքները մարդկանց մեջ առաջացնում են զգացմունքներ, մարդիկ ներքին զգացմունքներն արտահայտելու ուղիներ են փնտրում, և ամենը կատարվում է բնական ճանապարհով: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

գուան էր բու յաո 光而不耀

Պայծառ, բայց չլացնող

Եզրույթը նշանակում է՝ պայծառ լինել, բայց չլացնել: Լաոցզին այն օգտագործում էր՝ հասարակ ժողովրդի վրա իշխանավորների ազդեցությունը նկարագրելու համար: Բարձր կարգավիճակը, հեղինակությունն ու ռեսուրսները նրանց հնարավորություն են տալիս մեծապես ազդել մարդկանց կյանքի վրա, ինչպես պայծառ լույսը, որից անհնար է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

խուսափել: Սակայն Լաոցզին նաև հավատացած էր, որ ոչ մի իշխանավոր չպիտի իր կամքը թելադրի ժողովրդին, որի բնական վիճակը պետք է պահպանել ու պաշտպանել: Կրել ազդեցություն, բայց չվնասվել. սա նման է մի վիճակի, երբ շրջապատված ես պայծառ լույսով, բայց չես շլանում դրանից: Եզրույթի օգնությամբ կարելի է նկարագրել, թե հզոր մարդն ինչպես պիտի վերաբերվի ուրիշներին:

Մեջբերումներ.

Իմաստունը բարոյական կերպար է, բայց չի վնասում, կաշառվող ու մեծամիտ չէ. անաչառ է, բայց անվնաս, պայծառ, բայց աչք չշլացնող: («*Լաոցզի*»)

հե թունյի 合同异

Միավորել նմանությունն ու տարբերությունը

Փիլիսոփա Հուի Շին ձգտում էր միավորել իրերի նմանությունն ու տարբերությունը՝ համարելով, որ դրանք հարաբերական են: Ցանկացած երկու կոնկրետ երևույթի միջև անպայման գոյություն ունեն մեծ կամ փոքր նմանություններ ու տարբերություններ: Եթե դիտարկենք նմանության տեսանկյունից, բոլոր երևույթներն ունեն ընդհանրություններ, ուստի կարելի է ասել, որ դրանք նման են: Եթե դիտարկենք տարբերության տեսանկյունից, գոյություն չունի միանգամայն նման երկու երևույթ, ուստի բոլորը տարբեր են: Թե արդյոք իրերը միանգամայն նման են, թե տարբեր, կախված է նրանից, թե ինչ տեսանկյունից կդիտարկենք: Սա Հուի Շինի հանգեցրեց այն մտքին, որ նմանություններն ու տարբերություններն առանձին չեն, ամբողջական են:

Մեջբերումներ.

Երբ գոյություն ունեն խոշոր ընդհանրություններ և մանր տարբերություններ, կամ մանր ընդհանրություններ և խոշոր տարբերություններ, սա կոչվում է «մանր ընդհանրության և տարբերակման վիճակ»: Երբ իրերը լրիվ նույնական են կամ միանգամայն տարբեր, սա կոչվում է «խոշոր ընդհանրության և տարբերակման վիճակ» (*«Չուանցի»*)

հե չույու շի 和出于适

Ներդաշնակությունը բխում է համապատասխանությունից

Երաժշտության ներդաշնակությունը բխում է հոգու հետ նրա համապատասխանությունից և համաձայնությունից: «Ներդաշնակությունն» այն է, թե տարբեր հնչյուններն ինչպես են համադրվում և ներդաշնակվում: «Համապատասխանությունն» իր հերթին երաժշտության ուժգնությունն ու տեմբրն է, ինչպես նաև այն աստիճանը, մինչև ուր ունկնդիրը կարող է ընկալել երաժշտությունը: Եզրույթն ընդգծում է օբյեկտի՝ երաժշտության, և սուբյեկտի՝ հոգու միջև ներդաշնակության ու համաձայնության անհրաժեշտությունը, որպեսզի երաժշտությունը գնահատվի: Երաժշտության գեղեցկությունը ստեղծվում է սուբյեկտիվի և օբյեկտիվի միջև ներդաշնակության արդյունքում:

Մեջբերումներ.

Երաժշտությունը բխում է ներդաշնակությունից, ներդաշնակությունը՝ համապատասխանությունից: (*«Վարպեպ Լյուի Գարնան և աշնան փարեգրքերը»*)

հուուճի-բոֆա 厚积薄发

Կուտակիր լիարժեքորեն և ծախսիր խնայողաբար

Եզրույթը նշանակում է հնարավորինս շատ կուտակել, բայց խնայողաբար բաշխել: Սա հաճախ վերաբերում է գիտական հետազոտության կամ գեղարվեստական արարման գործընթացին, որի ընթացքում պետք է առատորեն կլանել ուրիշների գիտելիքն ու արդյունքները՝ հարուստ իմացություն ձեռք բերելու և ամուր հիմք կառուցելու համար: Այս հիմքով մարդը ներգրավվում է հետագա գիտական ուսումնասիրությունների կամ գեղարվեստական գործունեության մեջ՝ ձգտելով նոր ձեռքբերումների: Սա կարող է վերաբերել նաև երկրի կամ բիզնեսի, որը երկար ժամանակ ուժ հավաքելուց հետո սկսում է աստիճանաբար օգտագործել իր ներուժն ու ունակությունները՝ դեպի նորարարություններ և նոր հորիզոններ շարժվելու համար: Արտահայտությունը հորդորում է երբեք չձգտել արագ արդյունքների, այլ ուշադրություն դարձնել գիտելիք կուտակելու վրա և լիարժեք պատրաստվել հետագա առաջընթացին:

Մեջբերումներ.

Շատ կարգա ու կլանիր լավագույնը քո կարդացած գրքերից. ձեռք բեր խոր գիտելիքներ և աստիճանաբար բաշխիր դրանք. սա միակ բանն է, որ կարող եմ ասել քեզ: (Մու Շի. «Չան Հուի՛ բերք անեցնելու այլաբանությունը»)

հուա սին ցի ուեյ 化性起伪

Չևափոխիր ներհատուկ չար էությունը՝ ձևավորելու ձեռքբերովի բարի էություն

Եզրույթը նշանակում է՝ մարդուն հատուկ էության չար տարրերը փոխել և զարգացնել ձեռքբերովի բարի էություն: Այս էթիկական սկզբունքն առաջադրել է Մունցին՝ հիմնվելով այն համոզմունքի վրա, որ մարդկային էությունը չար է: Մունցին հավատացած է, որ մարդուն հատուկ է արտաքին երևույթների ձգտումը: Նման անսանձ ձգտումը հանգեցնում է մարդկանց միջև թշնամության, և հասարակության մեջ քաոս է առաջանում: Հետևաբար, պարտադիր է սանձել մարդկային ցանկությունը և ստիպել, որ մարդիկ ընդունեն ու պահպանեն ծեսերն ու օրենքները:

Մեջբերումներ.

Հատկանիշները, որոնք մարդիկ ունեն և որոնք հնարավոր չէ ձեռք բերել սովորելու և պրակտիկայի միջոցով, կոչվում է ներհատուկ էություն կամ բնույթ: Սերտած կամ պրակտիկայով ձեռք բերված ունակությունները կոչվում են ձեռքբերովի էություն: Սա է ներհատուկ և ձեռքբերովի էության տարբերությունը: (*«Մունցի»*)

Այսպիսով, իմաստունը ձևափոխում է մարդու ներքին բնույթի չար տարրերը և ձևավորում ձեռքբերովի բարի էություն: Ձեռքբերովի բարի էությունը ստեղծում է ծեսեր ու էթիկական չափանիշներ, որոնք էլ իրենց հերթին ծնունդ են տալիս օրենքներին: (*«Մունցի»*)

հուան ջուն յոու ջեն 幻中有真

Ճշմարտություն երևակայության մեջ

Եզրույթը նշանակում է, որ գրական երկի սյուժեն, որքան էլ երևակայական լինի, այնուամենայնիվ օժտված է ներքին ուժով և արտացոլում է հասարակության իրականությունը: Ըստ բուդդայական և դաոսական մտքի՝ հասարակությունը վաղանցիկ է ու փոփոխական, և մարդիկ չպիտի կառչեն անիրականից. ավելին, նրանք պիտի անդրանցեն պատրանքներն ու ճանաչեն իրերի ճշմարիտ էությունը: Ինչպես մատնանշում էին գրականության և արվեստի քննադատները, գրական երկերը և իրական կյանքը ճիշտ գնահատելու համար մարդիկ պիտի սովորեն շրջանցել երևակայական կողմը, որպեսզի ընկալեն ստեղծագործական երկի ճշմարտությունը և վայելեն դրա գեղեցկությունը: Որպես գրաքննադատության եզրույթ՝ ճշմարտությունը երևակայության մեջ ոչ միայն լույս է սփռում գեղարվեստական գործառույթի և գրականության ու արվեստի նշանակության վրա, այլև բացահայտում է գրական և գեղարվեստական արարման հիմնարար սկզբունքը, այսինքն՝ գեղարվեստական ստեղծագործությունը պիտի արմատավորվի իրական կյանքում, բայց չսահմանափակվի դրանով: Փոխարենը, այն պիտի ունենա մեկ նպատակ. միաձուլել կյանքի ճշմարտությունն ու գեղարվեստական երևակայությունը:

Մեջբերումներ.

Հետևաբար, [հեղինակը] ստիպված է նկարագրել բաժանումն ու վերամիավորումը, երջանկությունն ու տխրությունը մարդկային կյանքի երևակայական աշխարհում, ինչպես

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

նաև պատմել այն մասին, որ բարին միշտ հաղթում է, իսկ չարը՝ պատժվում, որպեսզի ընթերցողը սովորի դրանցից և գգուշանա: (Յանսիա Սանրեն. «Ճշմարտություն երևակայության մեջ» գրքի նախաբան)

Վերցնենք, օրինակ, «Ուղևորություն դեպի արևմուտք» վեպը... Վարպետն ու նրա երեք աշակերտներն ունեն միայն իրենց հատուկ որոշակի անհատականություն, վարվելակերպի կանոններ ու վարքագիծ: Եթե մեջբերեք որևէ բառ կամ գործողություն ու մարդկանց խնդրեք գուշակել, թե ում են պատկանում, նրանք կկռահեն: Նման հավաստի ազդեցության կարելի է հասնել միայն, երբ երևակայության մեջ կա ճշմարտություն: (Շուիսյան Ջուլի. «Չարմանալի պատմություններ» երկրորդ հատորի նախաբան)

հույժուա լիու ֆա 绘画六法

Նկարչության վեց օրենք

Եզրույթը վերաբերում է նկարչության վեց տեխնիկայի և գեղագիտական սկզբունքների, որոնք ձևակերպել է Հարավային Ցի և Լյան դինաստիաների նկարիչ Սիե Հեն: Նախորդ դարաշրջանի հայտնի նկարիչներին ուսումնասիրելուց հետո նա նկարչության մասին իր դիտարկումներն ամփոփեց վեց հիմնական օրենքներում՝ դինամիկ ոճ, հզոր վրձնահարվածներ, ճշմարտաման պատկերներ, կերպարային գունավորում, մանրամասն դասավորություն, նմանակում և մոդելների կրկնօրինակում: Այսպիսով նա սահմանեց ավանդական նկարչության տեսական կադապարը: «Դինամիկ ոճ» նշանակում է, որ նկարը դիտողին ստիպում է գնահատել իր կենսունակությունն ու հմայքը: Մա գեղագիտական ազդեցության վրա կենտրոնանալու հիմնական սկզ-

բունքն է: Մյուս հինգ օրենքները վերաբերում են հատուկ տեխնիկական միջոցների: «Հզոր վրձնահարվածներ» նշանակում է տիրապետել վրձնին և կարողանալ ազատորեն պատկերել տարբեր կերպարներ: «Ճշմարտանման պատկերը» նշանակում է, որ պատկերը պիտի վառ արտահայտի պատկերվածի ձևը: «Կերպարային գունավորումը» նշանակում է գույնի ընտրություն՝ ըստ նկարի առարկայի բնութագրի: «Մանրամասն դասավորություն» նշանակում է, որ կոմպոզիցիան ընդհանուր լավ ազդեցություն է թողնում: «Նմանակումը և մոդելների կրկնօրինակումը» նշանակում է կրկնօրինակել գլուխգործոցները՝ սեփական նկարչական հմտությունները հղկելու նպատակով: Այս օրենքները պարարտ հող դարձան հետագա շրջանի արվեստի քննադատության ու տեխնիկայի հինգ ոլորտների վերաբերյալ տրամաբանական համար՝ ամփոփելով իդեալական նկարչական տեխնիկայի գաղափարը և հարստացնելով նկարչության տեսությունը: «Նկարչության վեց օրենքներն» ընդգրկում են հին չինական գեղանկարչության հիմնական տեխնիկան և գեղագիտությունը: Դրանք նաև ուղենիշ դարձան արվեստի գնահատման համար և մեծ ազդեցություն թողեցին քննադատության և գեղարվեստական ստեղծագործության վրա Չինաստանում՝ սկսած Վեց դինաստիաների ժամանակաշրջանից:

Մեջբերումներ.

Որո՞նք են վեց օրենքները: Առաջին՝ դինամիկ ոճ: Երկրորդ՝ հզոր վրձնահարվածներ: Երրորդ՝ ճշմարտանման պատկեր: Չորրորդ՝ կերպարային գունավորում: Հինգերորդ՝ մանրամասն դասավորություն: Վեցերորդ՝ նմանակում ու մոդելների կրկնօրինակում: (Սիե Հե. «*Հին նկարների գնահատում*»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Նկարչության վեց օրենքները սեղմ են, ընկալելի, և կհանձնեն ժամանակի քննությունը: Կարելի է սովորել վերջին հինգ օրենքները՝ սկսած «հզոր վրձնահարվածներից»: Իսկ «դինամիկ ոճը» պահանջում է բնածին ունակություն և չի կարող ձեռք բերվել միայն տքնաջան աշխատանքի ու երկարատև փորձի միջոցով: Միայն ոգեշնչված միտքը կարող է հասնել դինամիկ ոճի, բայց գիտակցաբար չիմանալով, թե ինչպես: (Գուո Ռուոսու. «Փորձեր նկարչության ոլորտում»)

հույ շի հոու սու 绘事后素

Նախ՝ սպիտակ մետաքսը, ապա՝ նկարը

Արտահայտության նախնական նշանակությունն այն է, որ նկարելուց առաջ պետք է նախապատրաստել սպիտակ մետաքսի մի կտոր: Գաղափարը հետագայում ընդլայնվեց, և հիմա այն նշանակում է գեղեցկություն, որ սկիզբ է առնում բնական պարզությունից: Սրանից ելնելով՝ Կոնֆուցիոսն առաջադրեց այն գաղափարը, ըստ որի բարեգործությունն ու արդարամտությունը հիմնական են, էթիկայի կանոնները՝ երկրորդական՝ ընդգծելով, որ ծեսերի ուսուցումը սկիզբ է առնում մարդկային էության մեջ: Հետագայում գաղափարը ներմուծվեց զրական-գեղարվեստական ստեղծագործության և քննադատության ոլորտ, ըստ որի հետագա մշակումը պիտի հիմնված լինի նյութի վրա, իսկ ոճն ու նյութը պիտի համապատասխանեն և փոխլրացնեն իրար՝ այդպիսով վեր հանելով բնական գեղեցկությունը:

Մեջբերումներ.

Ցիսիան հարցրեց. «Գայթակղիչ ժպիտը, այտի սիրուն փոսիկները, անուշիկ աչքերի փայլը կարծես սպիտակ մե-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

տաքսի վրա արված գեղեցիկ նկար լինեն: Ի՞նչ են նշանակում այս տողերը»: Կոնֆուցիոսը պատասխանեց. «Նկարելու համար նախ և առաջ պետք է մի կտոր սպիտակ մետաքս»: (*«Անալեկրոններ»*)

Էթիկայի կանոնները պիտի հիմնված լինեն անձնվիրության ու հավատարմության վրա, ինչպես նկարը, որը նկարվում է նախապես պատրաստված սպիտակ մետաքսի կտորի վրա: (Ջու Սի. *«Անալեկրոնների տարբերակներ»*)

ձիշան-չենդե 积善成德

Քարոյական կերպար կարելի է ձևավորել բարություն կուտակելով

Մունցին ի սկզբանե այս գաղափարն առաջարկեց՝ որպես շիտակություն ձևավորելու միջոց: Նա հավատացած էր, որ մարդկային էությանը հետևելը հանգեցնում է արտաքին առարկաների շուրջ անվերջ վեճերի, ինչն էլ բերում է համայնքների ներսում պառակտման ու անհամաձայնության: Էթիկան և բարոյականությունը մարդու մեջ սերմանվում են դաստիարակության և կրթության միջոցով: Երկար ժամանակահատվածում հատուկ խոսքի ու վարքագծի պահանջներին հարմարվելով՝ մարդու մեջ աստիճանաբար ձևավորվում է վայելուչ պահվածք և ներքին բարոյականության զգացում:

Մեջբերումներ.

Կուտակված հողից սարեր են բարձրանում, ապա ծնվում են քամին ու անձրևը. ջուրը լցվում է խոր լճերը, որտեղ ապրում են վիշապներ. բազում լավ արարքներից ձևավորվում է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

բարոյական նկարագիր, որն առաջ է բերում խորաթափանցություն, ձևավորում իմաստունի սիրտ ու միտք («Մունցի»)

ձիսի-գուանյի 讲信修睦

Ամբարիբ ժողովրդի իմաստությունը

Սա նշանակում է աշխատել ավելի արդյունավետ՝ լայնորեն հիմնվելով բազմաթիվ մարդկանց գաղափարների ու իմաստության վրա: Երեք թագավորությունների շրջանում Ջուզե Լիանի (181-234) կողմից առաջարկված այս գաղափարը նշանակում էր, որ առաջնորդը պետք մյուսներին տա խոսելու բազում հնարավորություններ և լսի բոլոր կարծիքները, հատկապես նրանք, որ տարբերվում են իր կարծիքից: Ապա պիտի բոլոր կողմերից դիտարկի խնդիրը և ճիշտ որոշում կայացնի: Ոչ մի դեպքում չպիտի կարծի, թե անսխալական է ու չպիտի գործի կամայականորեն: Մարդկանց իմաստությունը դուրս բերելու դեպքում բոլորը կոզեշնչվեն ու կհասնեն հաջողության:

Մեջբերումներ.

Պաշտոնատար անձը պիտի ամբարիբ ժողովրդի գաղափարներն ու իմաստությունը և ակտիվորեն օգտվի մտածված և օգտակար տեսակետներից: (Ջուզե Լյան. «Հրահանգներ ենթականերին և պաշտոնյաներին»)

Այսպիսով, եթե շատերը մեկտեղեն իրենց ուժերը, չլիինի մի ծանրություն, որ հնարավոր չլինի բարձրացնել. երբ ամբարվում է շատերի իմաստությունը, չկա մի բան, որին հնարավոր չէ հասնել: («Հուայնանցի»)

ձիանսին-սիումու 讲信修睦

**Պահպանիր բարեխղճությունն ու ձգտիր
ներդաշնակության**

Եզրույթը, որ «Ծեսերի գրքից» է, նշանակում է արժևորել բարեխղճությունն ու ձգտել ներդաշնակ հարաբերությունների, որը «համընդհանուր ներդաշնակություն» պահպանող հասարակության առանցքային առանձնահատկությունն է և կոնֆուցիական գիտնականների տեսլականն էր Պատերազմող պետությունների ժամանակաշրջանից մինչև Ցին և Հան դինաստիաներ: Նրանք հավատացած էին, որ իդեալական հասարակության մեջ հողը պիտի պատկանի ողջ ժողովրդին, և մարդկանց և պետությունների միջև պիտի լինեն փոխադարձ վստահություն, համագործակցություն և ներդաշնակ հարաբերություններ: «Բարեխղճությունը պահպանելն ու ներդաշնակության ձգտելը» հետագայում դարձավ էթիկական նորմ, որը պաշտպանում էին կոնֆուցիական գիտնականները. ավելի ուշ այն նաև դարձավ չինական կարևոր մշակութային նորմ, որը կառավարում էր մարդկանց և պետությունների միջև հարաբերությունները:

Մեջբերումներ.

Երբ իշխում է մեծ Գառն, հողը պատկանում է բոլորին: Առաքինի և գիտակ մարդիկ ընտրվում են՝ որպես պաշտոնյաներ. բարեխղճությունը գնահատվում է, և մարդիկ ապրում են ներդաշնակության մեջ: (*«Ծեսերի գիրքը»*)

ձիեցի 节气

Քսանչորս արևային ժամանակահատված

«Քսանչորս արևային ժամանակահատվածը» յուրահատուկ երևույթ է ավանդական լուսնային օրացույցում: Գյուղատնտեսական աշխատանքները հեշտացնելու համար հին չինացիները կազմել էին լրացուցիչ օրացույց, որը տարին բաժանում էր 24 մասի՝ ըստ արևի շարժման, եղանակային փոփոխությունների և այլ բնական երևույթների, իսկ 24 արևային ժամանակահատվածները համաչափորեն բաշխվում էին 12 ամիսների մեջ: Արևային ժամանակահատվածը, որը սկսվում է ամսվա սկզբին, կոչվում է *ձիե* (节), իսկ այն հատվածը, որը սկսվում է ամսվա կեսից, կոչվում է *ցի* (气): (Ամեն երեք տարին մեկ, մեկ ամիս ունենում է միայն *ձիե*՝ առանց *ցի*, կամ մեկ ամիս ունենում է միայն *ցի*՝ առանց *ձիե*). այդ դեպքում ավելանում է նահանջ ամիս, որը կարգավորում է տարին: Արևային ժամանակահատվածներն այդպես են կոչվում, քանի որ ներկայացնում են եղանակի, ֆենոլոգիայի և կլիմայի փոփոխությունները: Եղանակային փոփոխություններն արտացոլող ութ արևային ժամանակահատվածներն են՝ Գարնան սկիզբը, Գարնանային գիշերահավասարը, Ամռան սկիզբը, Ամառային արևադարձը, Աշնան սկիզբը, Աշնանային գիշերահավասարը, Չմռան սկիզբը և Չմռան գիշերահավասարը. ֆենոլոգիական փոփոխությունները ներկայացնող չորս արևային ժամանակահատվածներն են՝ Միջատների արթնացումը, Թարմ կանաչը, Քիչ լիությունը և Բերքի հասունացումը. կլիմայի փոփոխությունները ներկայացնող 12 արևային ժամանակահատվածներն են՝ Անձրևաջուր, Հացահատկի անձրև, Քիչ տաքություն, Ուժեղ տապ, Տապի ավարտ, Սպիտակ ցող, Սառը ցող, Առա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ջին սառնամանիք, Թեթև ձյուն, Խիտ ձյուն, Թեթև ցուրտ և Սաստիկ ցուրտ: Ցին և Հան դինաստիաներում սկզբնավորված 24 արևային ժամանակահատվածները ոչ միայն թեթևացրել են գյուղատնտեսական աշխատանքները, այլև արտացոլել չին ժողովրդի ժամանակի ընկալումը անցյալում՝ ավելի քան երկու հազար տարի առաջ:

Մեջբերումներ

Մանրամաղ անձրևը թարմացնում է բուսականության բույր տեսակները, /իսկ որոտն արթնացնում է ձմեռային քնից: /Ազարակատերերը հանգստանալու ժամանակ չեն ունենում/, և հիմա սկսվում է հողի մշակումը: (Ուեյ Յինուու. «Հեյրևեյուվ, թե ազարակատերերն ինչպես են գարնանը աշխատում դաշտերում»)

ձինջուն-բաոզուո 尽忠报国

Եղիր հնարավորինս հավատարիմ և ծառայիք սեփական երկրիդ

Եղիր հնարավորինս հավատարիմ ու ծառայիք երկրիդ: «Հավատարիմ լինել և երկրին ծառայել» եզրույթն առաջին անգամ ի հայտ է եկել «Հյուսիսային դինաստիաներից Ջոու դինաստիայի պատմությունը» և «Հյուսիսային դինաստիաների պատմությունը» գրքերում, որոնք գրվել են Թան դինաստիայի սկզբնական շրջանում: Արտահայտությունը կապված է նաև հայտնի գեներալի հետ, որը մասնակցել է Հյուսիսային Չին դինաստիայի ներխուժման դեմ դիմադրության պատերազմին. նա Յուե Ֆեյն է (1103-1142) Հարավային Սուն դինաստիայից: «Սուն դինաստիայի պատմությունը»

նր» գրքում, որը կազմվել է Յուան դինաստիայում, հիշատակվում է, որ Յուե Ֆեյի մեջքին դաջված էր չորս տառանշան՝ «ձին ջուն բաո գուո» (尽忠报国): Սակայն չի նշվում, թե ով էր դաջել դրանք: Յին ժամանակաշրջանի սկզբում շրջանառվող խոսակցությունների համաձայն՝ դաջվածքն արել է Յուե Ֆեյի մայրը, իսկ դրան հաջորդում է պատմությունը, ըստ որի Յուե Ֆեյը նվիրված էր մորը և հնազանդվում էր նրա հրամանին՝ առավելագույնս հավատարիմ լինել և մինչև մահ ծառայել սեփական երկրին: Սա հավատարմության և որդիական բարեպաշտության կոնֆուցիական իդեալների հարանշանակությունն է, որոնք միավորված են մեկ գաղափարի մեջ, ու մինչ օրս չինացիներն այն օգտագործում են՝ որպես հայրենասիրության բնորոշ արտահայտություն:

Մեջբերումներ

Դու միշտ բարձր դիրք ես ունեցել, և թագավորական արքունիքը մեծահոգաբար է վերաբերվել քեզ, և, հետևաբար, պարտավոր ես մտածել, թե ինչպես կարող ես առավելագույնս հավատարիմ լինել և ծառայություն մատուցել երկրին: Այդ դեպքում ինչո՞ւ ես ուզում բարձրագույն իշխանությունը ուրիշներին հանձնել պաշտոնի անցնելուց ընդամենը մեկ օր անց: («Հյուսիսային Ջոու դինաստիայի պատմությունը»)

Յուե Ֆեյը Հե Ջուին ցույց տվեց մեջքի չորս տառանշանները՝ «ձին ջուն բաո գուո»(尽忠报国. «եղիր հնարավորինս հավատարիմ և ծառայիր սեփական երկրիդ», որը խոր դաջված էր նրա մաշկին: («Մուն դինաստիայի պատմությունը»)

ձին, գյուան 经, 权

Մշտական և ժամանակավոր

Չինը (经), որը նշանակում է մշտական, և *գյուանը* (权), որը նշանակում է ժամանակավոր, եզրույթներ են, որ օգտագործվում են չինական փիլիսոփայության պատմական տրամասության մեջ և վերաբերում են մի գույգ փիլիսոփայական հասկացությունների, այն է՝ Դաոյի մշտական և ժամանակավորապես փոփոխվող կողմերին: Մշտականը մարդկային հարաբերությունների և առօրյա կյանքի սովորական դրսևորումն է, հետևաբար, այն բնականոն վիճակը, որը պետք է պահպանել: Այն ունի նորմատիվային գործառույթներ ու նշանակություն: Ժամանակավոր նշանակում է Դաոյի գործառույթի փոփոխություն՝ տվյալ հանգամանքներին հարմարվելու կամ օրվա կարիքները բավարարելու համար: Հատուկ հանգամանքներում մշտականին հետևելը կարող է հանգեցնել Դաոյից շեղման: Այդ դեպքում կարելի է որդեգրել ճկուն ճանապարհը, այն է՝ ժամանակավորը: Ժամանակավորը, թվում է, շեղվում է Դաոյից, բայց իրականում ճկուն ձևով հարմարվում է Դաոյի պահանջներին: Մշտականի կամ ժամանակավորի գործարկումը տարբեր հանգամանքներում որոշվում է մարդու՝ Դաոյի խոր իմացությամբ ու վարպետությամբ:

Մեջբերումներ

Կոնֆուցիոսն ասում էր. «Կան մարդիկ, որոնց կարող ես միանալ ուսման մեջ, բայց պարտադիր չէ նրանց հետ հետևես Դաոյին: Կան և ուրիշները, որոնց կարող ես միանալ Դաոյին հետևելիս, բայց չկիսել նույն հավատը: Կան նաև այլք, որոնց հետ գուցե կիսում եք նույն հավատը, բայց

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

չունեք այն ճկունությունը, որն անհրաժեշտ է Դաոյին հետևելիս: (*«Անալեկրներ»*)

Մշտականը Դաոյի ընդհանուր արտահայտությունն է, իսկ ժամանակավորը՝ Դաոյի ճկուն կիրառումը: Դաոն միավորում է մշտականն ու ժամանակավորը: (*«Ձու Սիի գրույցների ժողովածու»*)

ջունցի գու ցիուն 君子固穷

Առաքինի մարդը պահպանում է իր իդեալները նույնիսկ հուսահատության մեջ

Նույնիսկ ճնշման առկայության դեպքում առաքինի մարդը պահպանում է իր բարոյական արժեքները: Ջունցի կամ առաքինի մարդ ի սկզբանե կոչում էին կառավարչի կամ ազնվականության ներկայացուցչի: Հետագայում այն ստացավ այլ նշանակություն՝ կրթված, ուղղամիտ մարդ: *Գուցյուն* (固穷) նշանակում է կառչել սեփական իդեալներին ու արժեքներին նույնիսկ դժվարությունների դեպքում կամ հուսահատության մեջ: Հին ժամանակներում մարդիկ հավատացած էին, որ հուսահատությունը ծանր փորձություն է առաքինի մարդկանց համար, որ նրանք չերերան իրենց ձգտումների մեջ ու չհայտնվեն կյանքի հատակում: Եզրույթն ամփոփում է ղեկավարելու ձիրքի, պատասխանատվության ու ազնվության արժեքները, որ քաղաքական ու մշակութային վերնախավը պիտի պահպանի դժվարությունների ու փորձությունների ժամանակ:

Մեջբերումներ

Կոնֆուցիոսն ասում էր. «Առաքինի մարդը կպահպանի իր իդեալները նույնիսկ հուսահատ վիճակում, իսկ ճղճիմ մարդը ոչնչի առաջ կանգ չի առնի»: (*«Անալեկրներ»*)

քեջեն մեն յու հու 苛政猛于虎

Բռնակալությունը վագրից կատաղի է

Կտրուկ և դաժան օրենքներ վագրից ավելի սարսափազդու են: Արտահայտությունը «Ծեսերի գրքից» է: Ըստ պատմության՝ երբ Կոնֆուցիոսն անցնում էր Թայ սարի լանջով, տեսավ գերեզմանի վրա արտասովոր մի կնոջ: Նա Յիուիմ ուղարկեց հարցուփորձ անելու: Կինն ասաց, որ տարածքում շատ վագրեր կան, և որ իր ընտանիքի անդամներից երեքը զոհ են գնացել վագրերին, բայց քանի որ տեղական օրենքները խիստ չեն, նա չէր ցանկանում հեռանալ: Կոնֆուցիոսը հոգոց հանեց ու ասաց. «Բռնակալությունը վագրից ավելի կատաղի է»: Սա բիրտ կառավարության քննադատությունն է, կառավարիչներին հորդորում է կրճատել հարկերն ու հարկադիր աշխատանքը և ենթականերին վերաբերվել կարեկցանքով: Սա բարեգութ կառավարման կոնֆուցիական սկզբունքների արտահայտություն է:

Մեջբերումներ.

Կոնֆուցիոսն ասում է. «Հիշիր, երիտասարդ, բիրտ ու բռնապետական օրենքներն ավելի վատ են, քան կատաղի վագրը»: (*«Ծեսերի գիրքը»*)

կույին 苦吟

Աշխատատար տաղաչափություն

Թան դինաստիայի բանաստեղծ Չիա Դաուն(779-843) բանաստեղծություն գրելը համարում էր բավական ցավոտ գործընթաց, և նրա ստեղծագործական մեթոդն էր՝ այնքան

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կրկնել բանաստեղծությունը, մինչև ճիշտ տողը գտնվի: «Աշխատատար տաղաչափությամբ» գրադվող գրողները հակված էին հոգնածության ու հուսահատության, իսկ նրանց պոեզիան համարվում էր վշտերը թեթևացնելու միջոց: Երբեմն եզրույթը նաև վերաբերում է գրական և գեղարվեստական ստեղծագործության հանդեպ կատարելապաշտության:

Մեջբերումներ

Ինձնից երեք տարի պահանջվեց՝ երկու ճիշտ տող գտնելու համար: /Ու երբ արտասանեցի դրանք, աչքերիցս արցունքներ հոսեցին: (Չիա Դաո. «Բանաստեղծությունն ավարտելուց հետո»)

Երբ արտասանում էի՝ որոնելով ճիշտ բառը /, մորուքիցս մի քանի մազ պոկեցի: (Լու Յանրան. «Աշխարհափայտ փառաչափություն»)

կուաշի 夸饰

Չափազանցություն և զարդարանք

Եզրույթը գրական երկում գեղարվեստական հմայքն ավելացնելու նպատակով չափազանցության ու զարդարանքի կիրառումն է: Պատշաճ կերպով օգտագործվելու դեպքում չափազանցությունն ու զարդարանքը կարող են գեղարվեստական ազդեցություն թողնել, որոնք ռեալիստական նկարագրություններից անդին են: Սակայն, չափից շատ կիրառման դեպքում հակառակ ազդեցություն կառաջանա, գրական գործը չափազանց զարդարուն ու ոչ ճշմարտաման կլինի: Հետևաբար, հին Չինաստանի գրաքննադատները

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հավատացած էին, որ պետք է խուսափել այս երկու գեղարվեստական միջոցի չափից դուրս կիրառումից:

Մեջբերումներ.

Հետևաբար, երկնքի ու երկրի սկզբնավորման օրից ի վեր, գոյություն ունեն հնչյուններ ու արտաքին կաղապարներ: Քանի դեռ դրանք նկարագրելու համար օգտագործվում են բառեր, չափազանցությունն ու զարդարանքը միշտ կկիրառվեն: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

Երբ չափազանցության օգտագործումը սահմանափակ է, իսկզարդարանքը՝ առանց հավակնությունների, ապա այդպես ստեղծված գրական երկը կարող է համարվել գերազանց ստեղծագործություն: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

լեթիան-զիմին 乐天知命

Յնծա երկնքի հետ համաձայնության համար և ճանաչիր նրա իշխանությունը

Յնծա, եթե համապատասխանում ես Երկնքին, ու ճանաչիր Երկնքի իշխանությամբ դրված սահմանափակումները: Հասկացությունն առաջացել է «Փոփոխությունների գրքից»: Երկինքը կարգավորում է մարդկանց գործերը, իսկ նրա իրավասությունը վճռում է մարդկային իշխանության սահմանը: Փոփոխությունները մարդու ուժերից վեր են, և մարդը պիտի հանգիստ հասկանա ու ընդունի դա: Քանի դեռ մարդիկ կարգավորվում ու սահմանափակվում են Երկնքի ու նրա իշխանության կողմից, նրանք կարող են առաքինի դառնալ ու մեծ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ձեռքբերումներ գրանցելանվերջ-անդադար ջանքերի շնորհիվ: Ուստի մարդիկ պիտի ցնծան, եթե համապատասխանում են Երկնքին ու նրա իշխանությամբ:

Մեջբերումներ

[Իմաստունը] կարող է համապատասխանաբար հարմարվել փոփոխություններին՝ առանց շատ հեռու գնալու: Նրանք ցնծում են, երբ համապատասխանում են Երկնային ու ճանաչում Երկնքի իշխանությամբորոշված սահմանները, ուստի մտահոգվելու առիթ չունեն: (*«Փոփոխությունների գիրքը»*)

լի ձիանբայ 离坚白

Առանձնացրու կարծրությունը սպիտակությունից

Առարկայի կարծրությունը սպիտակությունից առանձնացնելը Գունսունլունցիի առաջարկած գաղափարներից է: Նայելով կարծր ու սպիտակ քարի՝ մարդը տեսնում է միայն դրա սպիտակությունը, բայց ոչ կարծրությունը, իսկ ձեռքով քարին դիպչելիս միայն զգում է կարծրությունը, բայց ոչ սպիտակությունը: Կարծրությունն ու սպիտակությունն առանձին են: Դրանք միաժամանակ չեն դրսևորվում. այսպիսով, սպիտակ քարը, որ կարծր է, չի կարող կոչվել կարծր ու սպիտակ քար: Գունսունլունցին այս օրինակով արտահայտում էր իր պատկերացումը իրերի հատկությունների մասին: Վերջիններս անկախ են իրարից և չեն կարող միաժամանակ հանդես գալ նույն երևույթի մեջ:

Մեջբերումներ.

Նայելով քարին՝ անհնար է տեսնել դրա կարծրությունը: Նկատվում է միայն սպիտակությունը, հետևաբար կարելի է ասել, որ այն օժտված չէ կարծրությամբ: Իսկ դիպչելով անհնար է զգալ սպիտակությունը: Ջգալի է միայն կարծրությունը, ուստի կարելի է ասել, որ նրան հատուկ չէ սպիտակությունը: («Գունասունյունցի»)

լի սին դե սի 离形得似

Անդրանցիք արտաքին ձևը և բացահայտիչ էությունը

Ինչ-որ բան նկարագրելիս գրական ստեղծագործությունը պիտի կարողանա անցնել արտաքին տեսքի սահմանները և բացահայտի էությունը՝ արտացոլելով իրականության բարձր աստիճան: Ջուանցին (369?-286մթա.) համարում էր, որ կյանքի էությունը ոչ թե ֆիզիկական ձևն է, այլ ոգին: Պետք է մոռանալ սեփական ֆիզիկական գոյությունն ու լիարժեք ազատություն տալ ոգուն: Ուշ Թան շրջանի բանաստեղծ Սիկուն Թուն (837-908թթ.) որդեգրեց այս տեսակետը և հավատացած էր, որ բանաստեղծական նկարագրությունը նույնպես պիտի կենտրոնանա էության, և ոչ թե ձևի վրա: Բանաստեղծական արարման ու քննադատության այս գաղափարն ավելի ուշ կիրառվում էր նաև վայելչագրության և գեղանկարչության ոլորտում:

Մեջբերումներ

Կյանքը գոյություն ունի ֆիզիկական մարմնում: Սակայն կան մարդիկ, որոնք մեռած են, քանի որ, թեև ֆիզիկապես ողջ են, հոգի չունեն: («Ջուանցի»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Նա, ով կարող է անդրանցել արտաքին ձևը և բացահայտել էությունը, իսկապես մեծ բանաստեղծ է: (Միկուն Թու. «Պոեզիայի քսանչորս ոճերը»)

Ստեղծագործությունը, որն անդրանցում է արտաքին ձևն ու բացահայտում էությունը, գլուխգործոց է: Մինչդեռ այս ունակության հիմքում ընկած տեսությունը շատ նուրբ է ու չի կարող մեխանիկորեն հասկացվել: (Յաո Մենչաո. «Անչնահան մտորումներ վայելչագրության արվեստի մասին»)

լիցի 麗辭

Չարդարուն զուգահեռ ոճ

Եզրույթը վերաբերում է դասական չինական գրական ոճին, որն ընդհանրապես հայտնի է «զուգահեռ արձակ» անունով և հիմնականում կազմված է միանման կառուցվածքովերկտող ոտանավորներից: Միավանկ չինարեն բառերը, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է մեկ ձեռագիր տառանշանով, հեշտությամբ դասավորում են իմաստային համաչափությամբ ու տաղաչափական ներդաշնակությամբ արտահայտությունների զույգերում: Չարդարուն զուգահեռ ոճն ընդգծում է լեզվի ձևի գեղեցկությունը՝ առանց անտեսելու ձևի ու բովանդակության ներդաշնակությունը. այն կիրառվում է գեղեցկագույներկեր ստեղծելիս, որոնց ձևն ու բովանդակությունը միմյանց են հադորդում իրար:

Մեջբերումներ.

Այսպիսով, Չարդարուն զուգահեռ ոճին հատուկ է երկտող ոտանավորների չորս տեսակ՝ համապատասխան բառեր (այս տեսակը հեշտ է), համապատասխան փաստեր (սա դժվար է), համապատասխան հակադրություն, որը գերա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

զանց է, և համապատասխան նույնություն, որը խղճուկ է: (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»)

Եթե գրական երկը չունի նախնական գրավչություն, գուրկ է նուրբերևակայությունից և լի է անմշակ ու ընդհանուր գուգահեռ արտահայտություններով, այնքան ձանձրալի կլինի, որ մարդիկ կքնեն: (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»)

լինյուան-լուբո 临渊履薄

Ջգույշ եղիր, ասես կանգնած ես ժայռի եզրին կամ քայլում ես սառույցի բարակ կտորի վրայով

Ջգույշ ու շրջահայաց եղիր, ինչպես մարդը, որ կանգնած է ժայռի եզրին կամ քայլում է սառույցի բարակ շերտի վրայով. երկուսն էլ վտանգավոր իրավիճակներ են, որոնց դեպքում մարդիկ պիտի ծայրահեղ զգույշ լինեն՝ հանուն սեփական անվտանգության: Նույն զգուշությունն ու շրջահայացությունը պետք է դրսևորել էթիկայի կանոնները, ծեսերն ու օրենքները պահպանելու, ինչպես նաև սեփական պարտականությունները կատարելու հարցում: Ցանկացած շեղում կարող է հանգեցնել աղետալի հետևանքների: Այսպիսով, զգույշ ու շրջահայաց լինելը շատ կարևոր է:

Մեջբերումներ.

Բոլոր մարդիկ գիտեն, որ պետք չէ անգեմ կովել վագրի դեմ կամ ոտքով կտրել-անցնել գետը, բայց տեղյակ չեն ուրիշ վտանգների մասին: Մենք պետք է զգույշ ու շրջահայաց լինենք այնպիսի վտանգավոր իրավիճակներում, երբ կանգնած ես ժայռի եզրին կամ քայլում ես սառույցի բարակ շեր-

տի վրայով: («Երգերի գիրքը»)

Երբ Յենցին հիվանդ էր, հավաքեց իր ուսանողներին ու ասաց. «Նայեք իմ դողացող ոտքերին ու ձեռքերին: «Երգերի գիրքն» ասում է. «Պետք է զգույշ, խոհեմ ու շրջահասց լինես, ասես կանգնած ես ժայռի եզրին կամ քայլում ես սառույցի բարակ շերտի վրայով»: Հիմա ես նմանատիպ վիճակում եմ ու գիտեմ, որ կարող եմ խուսափել աղետներից ու պատժից, իմ ուսանողներ»: («Անալեկտրներ»)

լիուզուան 六观

Վեց չափանիշ

Եզրույթը վերաբերում է գրաքննադատության հետևյալ վեց չափանիշներին, որոնք նաև ստեղծագրության վեց տարրեր են. ստեղծագործության կառուցվածքային ուրվագիծ, բառերի ընտրություն՝ նախադասություններ կառուցելու համար, վաղ շրջանի գրողների ոճի ընդունումն նորացում, արտահայտման ավանդական ձևերի ժառանգումն ձևափոխում, փաստարկը պաշտպանելու նպատակով օրինակների մեջբերում և երաժշտական ռիթմ: Գրաքննադատության ոլորտում վեց չափանիշներն առանցքային բաղադրիչ էին տեսական համակարգի համար, որը սահմանված է «Գրական միտքը և վիշապներ քանդակելը» գրքում: Վեց չափանիշներն առաջարկում էին օրենքներ, որոնց կարելի էր հետևել՝ գրաքննադատության մեջ սուբյեկտիվությունից խուսափելու համար: Նրանք տեսական ուղղորդման կաղապար դարձան հետագա սերունդների քննադատների համար և զգալի ազդեցություն ունեցան գրական տեսության զարգացման վրա արդի ժամանակներում:

Մեջբերումներ.

Հետևաբար, պետք է ուսումնասիրենք ու մեկնաբանենք գրական գործը՝ ըստ հետևյալ վեց չափանիշների՝ ստեղծագործության կառուցվածքային ուրվագիծ, բառերի ընտրություն՝ նախադասություններ կառուցելու համար, վաղ շրջանի գրողների ոճի ընդունում և նորացում, արտահայտման ավանդական ձևերի ժառանգում և ձևափոխում, փաստարկը պաշտպանելու նպատակով օրինակների մեջբերում և երաժշտական ռիթմ: (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»)

լիույի 六艺

Վեց արվեստ

«Վեց արվեստ» արտահայտությունն ունի երկու իմաստ: Այն կարող է վերաբերել վեց դասական ստեղծագործություններին՝ «Երգերի գիրքը», «Պատմության գիրքը», «Ծեսերի գիրքը», «Երաժշտության գիրքը», «Փոփոխությունների գիրքը» և «Գարնան և ամռան տարեգրքերը»: Կոնֆուցիական գիտնականները դարերի ընթացքում մշտապես մեկնաբանել են այս քաղաքական տեքստերը՝ դրանց տալով հարուստ բովանդակություն: Վեց արվեստների հետ կապված տեսությունները ներկայացնում են հին դասականների հիմնական տեսակետները համաշխարհային կարգուկանոնի և արժեքների մասին: «Վեց արվեստ» արտահայտությունը կարող է նաև վերաբերել վեց հմտություններին՝ ծեսեր, երաժշտություն, նետաձգություն, մարտակառք վարել, գրավոր տառանշանների կառուցվածք և մաթեմատիկա, որոնք հնում դպրոցական կրթության հիմնական բովանդակությունն էին:

Մեջբերումներ

Վեց արվեստները թագավորականուղեցույցի կանոններ են, որոնցով հին ժամանակներում իմաստունները մեկնաբանում էին Երկնայինուտին, շտկում մարդկային հարաբերությունները և խաղաղություն ու կարգուկանոն պահպանում հասարակության մեջ: (*«Հան դինաստիայի պարմութունը»*)

Պալատի կրթության պատասխանատուի պարտականությունները. թագավորին հորդորել զերծ մնալ սխալներից և ճիշտ սկզբունքներ սովորեցնել պետության հետագա սերունդներին: Պատասխանատուն նրանց սովորեցնում է վեց արվեստ՝ ծեսերի հինգ տեսակ, երաժշտության և պարի վեց ոճ, նետաձգության հինգ ձև, մարտակառք վարելու հինգ մեթոդ, գրավոր տառանշանների վեց կառուցվածք և մաթեմատիկայի ինը տեսակ: (*«Չոուի ծեսերը»*)

մատուց 矛盾

Նիզակի ու վահանի պարադոքսը. հակասություն

Եզրույթը սկիզբ է առել «Հանֆեյցիի» պատմությունից: Ըստ պատմության՝ *մաուն* (矛) նիզակ է, որը կարող է ծակել ցանկացած բան. *դունը* (盾) վահան է, որն անխոցելի է: Մաուն և դունը պարադոքս են, ուստի անհնար է միաժամանակ հաստատել երկու պնդումը: Ավելի ուշ եզրույթը նշանակում էր «հակասություն» կամ «խոսքի ու գործողության անհամապատասխանություն»:

Մեջբերումներ.

Չու նահանգից մի մարդ նիզակներ ու վահաններ էր վաճառում: Նա գովում էր իր վահանը՝ ասելով. «Այնքան ամուր է, որ ոչինչ չի ծակի այն»: Հետո գովում էր նիզակը՝ ասելով. «Այնքան սուր է, որ ամեն ինչ կծակի»: Մեկը հարցրեց նրան. «Իսկ ի՞նչ կլինի, եթե նիզակովծակես վահանը»: Տղամարդը պապանձվեց: Նիզակը, որ կարող էր ծակել ամեն ինչ, և վահանը, որը ոչինչ չի ծակի, չեն կարող միաժամանակ գոյություն ունենալ: («Հանֆեյցի»)

մի բու յուու չու, սյան քե յուու ջուն 靡不有初, 鲜克有终

Բոլոր երևույթներն ունեն սկիզբ, բայց քչերն են հասնում ավարտին

Բոլոր նախաձեռնություններն ունեն սկիզբ, բայց քիչ մարդիկ են ի վիճակի տեսնել դրանց ավարտը: Մի (靡) նշանակում է «ոչինչ, ոչ ոք», իսկ չու (初)՝ «սկիզբ»: Սյան (鲜) նշանակում է «քիչ, մի քանի», իսկ կե (克) նշանակում է «ի վիճակի լինել, կարողանալ»: Ասացվածքը սկիզբ է առել «Երգերի գրքից» և քննադատում էր Չոուի ապաշնորհ ու անբարո Լի արքային, որի մշտապես փոփոխվող հրովարտակների պատճառով ժողովուրդն ապրում էր կատարյալ թշվառության մեջ: Պատմությունն ունի գործնական փիլիսոփայական հարանշանակություններ: Դժվար չէ որևէ գործ ձեռնարկել՝ ընտանեկան միջավայրում, բիզնես վարելիս, պաշտոնավարելիս կամ երկիր կառավարելիս: Ամենադժվարն արդյունքը մինչև վերջ պահպանելն է: Գաղափարը մեզ հորդորում է երբեք չփոխել միտքը, խուսափել համարձակ ու հապճեպ խոստումներից, որոնք անհնար է ի կատար

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ածել: Չի կարելի կեսից հանձնվել, պետք է գնալ մինչև վերջ, որպեսզի այն, ինչ լավ է սկսվել, լավ ավարտ ունենա:

Մեջբերումներ.

Երկինքը ստեղծեց բոլոր մարդկանց: Կառավարության հրամանագրերը պետք է հաստատուն լինեն: Ամեն ինչ ունի սկիզբ, բայց քչերն են սկսածը հասցնում ավարտին: (*«Երգերի գիրքը»*)

միասության 庙算

Արքունական հաշվարկ

Եզրույթը խորհրդանշում է արքունիքում կատարվող հաշվարկներ խոշոր ռազմական ու պետական գործերի առիթով: Կայսերական արքունիքն այն վայրն է, որտեղ Հին Չինաստանի պաշտոնյաները խորհում էին Հին Չինաստանի պետական գործերի մասին: Պատերազմից առաջ հաշվարկման նպատակն էր՝ մշակել պետության ուժեղ ու թույլ կողմերի վրա հիմնված ռազմավարություն: Սունիի տեսակետի համաձայն՝ պատերազմը ոչ միայն մրցակցություն է մարտի դաշտում, այլև իրողություն, որը ենթարկվում է քաղաքական, տնտեսական ու այլ գործոնների ազդեցությանը: Այսպիսով, հաշվարկման ժամանակ անհրաժեշտ էր հաշվի առնել ամենատարբեր պատերազմական սցենարներ ու դիտարկել պետության հանգամանքների մի ամբողջ շարք: Արքունական հաշվարկը պատերազմի անհրաժեշտ նախապատրաստական պայման էր:

Մեջբերումներ.

Նրանք, որ ճակատամարտից առաջ հաշվարկ են անում ու հաղթում, պետք է որ մանրամասն ուսումնասիրած լինեն ողջ գործընթացը: Նրանք, որ ճակատամարտից առաջ հաշվարկ են անում ու պարտվում, հավանաբար լիարժեք չեն խորացել գործընթացի մեջ: Մանրակրկիտ հաշվարկը բերում է հաղթանակի, թերի հաշվարկը հանգեցնում է պարտության. իսկ հաշվարկի բացակայության մասին ավելորդ է խոսել: Պատերազմական գործն այս տեսանկյունից դիտարկելիս հաղթանակն ու պարտությունն ակնհայտ են: (*«Պատերազմի արվեստը»*)

մինդե 明德

Հարգանքի արժանի առաքինություն

Եզրույթը նշանակում է դրսևորել շիտակություն կամ ազնիվ պահվածք: Ի սկզբանե օգտագործվել է՝ միապետից ակնկալվող որակները բնութագրելու համար: Մասնավորապես, *դե* (德) նշանակում էր արդարություն ու պարկեշտ վերաբերմունք ժողովրդի հանդեպ՝ թե՛ պաշտոնյաների նշանակման հարցում, թե՛ պարզեցնել շնորհելիսու պատիժներ սահմանելիս: *Մինդե* (明德) որպես բայ նշանակում էր հենց այդպես կառավարել երկիրը: Հետագայում եզրույթը որպես գոյական ցույց էր տալիս իշխանավորներից պահանջվող բարոյական որակները: Ըստ կոնֆուցիականության՝ բարոյական կառավարումն ընդլայնում է մարդու ներքին անկեղծությունն ու ուղղամտությունը, հետևաբար՝ մինդեն կառավարչի կողմից դրսևորվող բարոյականության բարձրագույն արտահայտությունն է:

Մեջբերումներ.

Չեր հռչակավոր հայրը՝ Ջոուի Ուեն արքան, առաքինի էր իր ժողովրդի հանդեպ: Նա պատժում էր խնայելով, չէր անարգում հարազատներին կորցրածներին, պաշտոնի էր նշանակում ունակություններով օժտվածներին, ճանաչում էր լավ մարդկային որակներ ունեցողներին և ահաբեկում նրանց, ում պետք էր հեռու պահել: (*«Պատմության գիրքը»*)

Մեծ կրթության նպատակն է՝ ցուցաբերել բարձր բարոյական արժեքներ և պատշաճ վարք, կարեկցանքով վերաբերվել մարդկանց և հետևել բարեգործության ու առաքինության սկզբունքներին: (*«Ծեսերի գիրքը»*)

մին ֆեն շի ցուն 明分使群

Ճիշտ դասակարգումը հանգեցնում է համագործակցության

Խմբում համագործակցությունը հնարավոր է միայն, երբ դրա ներսում անհատները ճիշտ են դասակարգված, և գոյություն ունի հասարակական կարգ: Մունցիի համար, հենց «միասին աշխատելու» ունակությունն է մարդկանց տարբերում կենդանիներից: Եթե չլինեն հասարակական սահմանափակումներ, մարդ արարածները կհետևեն իրենց ներհատուկ ցանկություններին ու կկռվեն տարբեր հարցերի շուրջ, ինչը կհանգեցնի պառակտման խմբի ներսում: Ուստի պիտի լինեն համապատասխան կանոններ տարբեր դասերի ներկայացուցիչների համար՝ հստակ ձևակերպված իրավունքներով և պարտականություններով, որոնք կուղղորդեն պատշաճ վարքագիծ, կսահմանափակեն անհամաձայնությունը և կնպաստեն համագործակցության:

Մեջբերումներ.

Մարդը ցլի չափ ուժեղ չէ ու չի կարող ձիու պես արագ վազել: Սակայն մարդն ունակ է երկուսից էլ օգտվել: Բայց ինչպե՞ս: Պատասխան. մարդ արարածները կարող են միասին աշխատել, մինչդեռ կենդանիները չեն կարող: Իսկ ի՞նչ ասել է՝ մարդիկ կարող են միասին աշխատել: Պատասխան. ունենալով տարբեր դասեր ու դիրքեր: Իսկ ինչպե՞ս են գործում դասերն ու դիրքերը: Պատասխան. վարվելակերպի ճիշտ կանոնների շնորհիվ: Այս կանոնները կիրառելու դեպքում կստեղծվի ներդաշնակություն, ներդաշնակության արդյունքում՝ միասնություն, իսկ միասնության արդյունքում՝ ուժ: Ուժով հնարավոր է հաղթահարել ցանկացած դժվարություն: (*«Մունցի»*)

Առանց խմբի աջակցության մենակ ապրելը հանգեցնում է աղքատության. առանց ճիշտ դասակարգման միասին ապրելը հանգեցնում է վեճերի: Աղքատությունն ու տարածայնություններն աղետալի են: Այս խնդիրները լուծելու լավագույն միջոցը տարբեր դասերսահմանելն է, ինչը հնարավոր է դարձնում համագործակցությունը: (*«Մունցի»*)

մու ձի դառ ցուն 目击道存

Սեփական աչքերով տեսնել ճանապարհը

Եզրույթը, որն առաջին անգամ հայտնվել է չինական դասական «Ջուանցի» (Ջուանցի մթա. 369?-286) գրքում, նշանակում է, որ մարդը կարող է հեշտությամբ տեսնել Դաոյի գոյությունը և կարիք չունի հույսը դնել խոսքային բացատրությունների կամ տրամաբանական վերլուծության վրա: Հետագայում այն օգտագործվում էր գրական երկերը գնա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հատելիս և գիտության ոլորտում: Հղացքն ընդգծում է, որ մարդուն անհրաժեշտ է անդրանցել ձայնային և տեսողական ընկալումների և տրամաբանական վերլուծության սահմանները և խուսափել ցանկացած խանգարող մտքից կամ արտաքին առարկաներից՝ արվեստը ճշմարիտ գնահատելու համար: Գաղափարն ընդգծում է բնագոյային ներհայեցողության փնտրտուքի կարևորությունը, որի վրա ոչ մի ազդեցություն չունեն գրականության ու արվեստի գործնական ըմբռնումները:

Մեջբերումներ.

Յիլուն ասաց. «Դու, վարպետ վաղուց ուզում էիր տեսնել Ուենբո Սյուեցիին: Բայց ոչ մի բառ չասացիր, երբ տեսար նրան: Ինչու՞»: Կոնֆուցիոսը պատասխանեց. «Հենց որ տեսա նրան, գիտակցեցի, որ նա ունի Դաո: Ուստի կարիք չկար որևէ բան ասել նրան»: («Չուանցի»)

Եթե մտադիր ես բանաստեղծություն գրել, միտքդ կենտրոնացրու դրա վրա: Աչքերդ գամիր օբյեկտի աչքերի վրա, որի մասին հիացմունքդ ուզում ես արտահայտել բանաստեղծության մեջ, և սրտով գնահատիր այն: Այդպես կհասնես բանաստեղծական արտացոլման կատարյալ ոլորտ, ու, ասես բարձր սարի գագաթին կանգնած, քեզնից ներքև կտեսնես համայնապատկերը և լիարժեք կդեկավարես բոլորին: (Ուան Չանլին. «Պոեզիայի կանոններ»)

նանսի 南戏

Հարավային օպերա

Նանսին (南戏)՝ Հարավային օպերան, Հան էքնիկ օպերան է՝ Հյուսիսային Սուն դինաստիայի ուշ շրջանից մինչև

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Յին դինաստիաների սկիզբը: Օպերան ստեղծվել է Ուենչոու շրջանում, երբ Սունի կառավարությունը փախավ հարավ: Այն ժամանակ այն նաև կոչվում էր *չուանցի* (传奇 դրամա), *սիուեն* (戏文 պիես), ինչպես նաև Ուենչոու *Յաջու* (温州杂剧 Ուենչոու օպերա), Յունձիա *Յաջու* (永嘉杂剧 Յունձիա օպերա) և Յունձիա *Սիցու* (永嘉戏曲 Յունձիա պիես): Տեղական ժողովրդական երգեցողության ոճերի հիմքի վրա ստեղծված հարավային օպերան նախ զարգացավ գյուղական օպերաներից՝ առանց պալատական ոճերի ու ռիթմերի ազդեցության, և առանձնանում էր բնական ու սահուն երգեցողությամբ: «Պիպայի հեքիաթը»՝ Գաո Մինի (1301?–1370?) պիեսը, խորհրդանշում էր Հարավային օպերայի զարգացածության բարձր մակարդակը: Հարավային օպերան ժառանգել էր Սունի ցաջուն և ազդարարում էրչուանցիիձևավորումը Մին դինաստիայում: Չուանցի պիեսները բավական երկար էին, հարմարեցվում էին բազմաթիվ դերերի, և բոլոր դերասանները երգում էին: Հարավային օպերայի գլուխգործոցներից են «Հերակալի ռոմանսը», «Սպիտակ ճագարի պատմությունը», «Լուսնալույսի տաղավար» և «Շանը սպանելով»: Հարավային Չինաստանում բազմաթիվ օպերաներ ստեղծվում էին Հարավային օպերայի հիման վրա:

Մեջբերումներ.

Լույնլուծիձևը և Գանչիսիուն երկուսն էլ Չինենգաոյի դուստրերն էին: Նրանք գեղեցիկ էին և հրաշալի կատարում էին Հարավային օպերան: (Միա Թինջի. «Փլեժըր Հսուս ժողովածու»)

Չին և Յուան դինաստիաներում Հյուսիսային օպերան հայտնի էր ցաջու, իսկ Հարավային օպերան՝ սիուեն անունով: (Հե Լյանցուն. «Գործեր չորս գիտնականների ուսումնասիրությունից»)

նի բուն ցու սին 拟容取心

Համեմատիր արտաքինը՝ էությունը բացահայտելու համար

Եզրույթը նշանակում է, որ բանաստեղծն օգտագործում է համաբանության և խթանման տեխնիկան՝ երևույթների ձևն ու արտաքին տեսքը նկարագրելու համար: Նա ընդունում է իրերի լրացուցիչ իմաստներն ու սկզբունքները՝ այսպիսով միմյանց կապելով ու համադրելով ի սկզբանե տարբեր երևույթներ: *Նիրուն* (拟容 արտաքինը համեմատելը) կարևորում է *բիսինի* հատուկ ձևերը (比兴 համաբանություն և խթանում): *Տուսինը* (取心 էությունը ըմբռնելը) նպատակ ունի հասկանալ իրերի ոգին ու էությունը, հետևաբար այն կարևորում է ներքին հարանշանակություններն ու սկզբունքները, որոնք ներառված են իրերի ձևի մեջ: Համադրված իմաստի դեպքում որոշակի իմաստունեցող իրերի նարտահայտություն տալով՝ մարդը ենթադրում ու արտահայտում է իր մտքերն ու զգացմունքները: Գաղափարն ի հայտ է եկել «Գրական միտքը և վիշապներ քանդակելը» գրքում: Այն զարգացել է «Փոփոխությունների գրքի» *նիուու լիսյան* (拟物立象 համեմատել երևույթներն ու սահմանել նմանությունները) գաղափարից: Լիու Սյեն (465?-520) առաջինն էր, որ կիրառեց եզրույթը՝ հիմնականում բացատրելու համար, որ համաբանությունն ու խթանումը փոխկապակցված են, բայց՝ տարբեր: Այստեղ համաբանությունը նշանակում է «արտաքին տեսքի համեմատություն»: Ամենակարևորը իրերի սկզբունքին հավատարիմ մնալն է: Պետք է խուսափել այն ամենից, ինչ համոզիչ չէ: Խթանում նշանակում է «ընկալել էությունը»՝ զգալով այն, ինչ խրթին է, և կապվել իմաստի հետ:

Մեջբերումներ.

Երբ բանաստեղծն օգտագործում է համաբանություն և խթանում, մոտենում է իրերին (երևույթներին) և մանրամասն ուսումնասիրում դրանք: Իրերը կարող են խիստ անկազմակերպ լինել, բայց համադրվելու դեպքում սերտ կապի մեջ կհայտնվեն: Իրերի էությունն ըմբռնելու նպատակով արտաքինը համեմատելու դեպքում դատողություն անելիս պետք է լինել հակիրճ ու վճռական: Երբ ասմունքի մեջ ու երգերում ներգրավվում են զանազան տարրեր, դրանք ուռչում են ու հոսում գետի պես: (Լիու Սյե. «Գրական միտքն ու վիշապներ քանդակելը»)

Համաբանություն նշանակում է՝ համեմատել իրերի արտաքին տեսքը, իսկխթանում նշանակում է ըմբռնել իրերի էությունը: Նշանակությունն այն է, ինչ թաքնված է արտաքինի տակ: (Չիաոբան. «Բանաստեղծական ոճեր»)

նյան 年

Նյան/տարի

Չինարեն *նյան* (年) տառանշանը բառացի նշանակում է բերքի հասունացում: Զանի որ բերքը հավաքվում է հիմնականում տարեկան մեկ անգամ, չինարեն նյան տառանշանն աստիճանաբար ձեռք բերեց այլ իմաստ՝ «մեկ տարվա ժամանակահատված», իսկ հետագայում վերաբերում էր ամենամյա Գարնան փառառոնին: Ինչ վերաբերում է օրացույցին, ապա բառը լուսնային օրացույցի (լուսնարևային օրացույց) մեկ տարվա ժամանակահատվածն է, որը բաղկացած է 12 ամսից. 7 ամիս՝ յուրաքանչյուրը 30 օր, և 5 ամիս՝ յուրաքանչյուրը 29 օր, ընդհանուր 354 կամ 355 օր: Նահանջ տա-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րին ունի 13 ամիս, ընդհանուր առմամբ՝ տարեկան 383, 384 կամ 385 օր: Լուսնային օրացույցի տեսանկյունից՝ Հին Չինաստանում այն սերտորեն կապված էր գյուղատնտեսական շրջափուլերի հետ, և սա բնորոշում է հին չինացիների ժամանակի իմացությունը և գյուղատնտեսական հասարակության կոնցեպտը: Գրիգորիանական օրացույցը ներմուծվեց արևմուտքից 1912 թվականին, Չինաստանի Հանրապետության կողմից՝ սկիզբ դնելով լուսնային և արևային օրացույցների երկակի համակարգին: Արդյունքում նյան (տարի) բառը, կախված համատեքստից, նշանակում է արևային կամ լուսնային օրացույցի մեկ տարի:

Մեջբերումներ.

Տարվա եղանակները փոխվում են, իսկ ծաղիկները նույնն են մնում.բայց մարդկանց դուր է գալիս տարեցտարի դրանց փոխվող արտաքին տեսքը: (Լիու Սիյի. *«Տխրելով ճերմակահեր ծերունու համար»*)

փինթի 品題

Գնահատականներ տալ

Գաղափարը նշանակում է գնահատել մարդու բնավորությունը, ունակությունները, վարքուբարքն ու մոտեցումները. սա տարածված պրակտիկա էր՝ սկսած Հանի ուշ շրջանից մինչև *Չին* և *Ուեյ* դինաստիաներ: Առաջին անգամ ներմուծվելով՝ պրակտիկան դրական ընդունելության արժանացավ, քանի որ մարդկանց դատում էին՝ ըստ բարոյական կերպարի և ունակությունների, և ոչ ընտանեկան բնութագրի. շուտով սա դարձավ պաշտոնյաներին ըստ իրենց կարողու-

թյունների ընտրելու կարևոր միջոց: Ուրիշներին գնահատականներ տալը զրույցի տարածված թեմա էր մարդկանց շրջանում *Ուեյ* և *Չին* դինաստիաներում: Սակայն այս գնահատականն աստիճանաբար փոխվեց, և Ուեյ դինաստիայի ուշ և *Չին* դինաստիայի վաղ շրջանում նշանակում էր մարդկանց ընտանեկան կարգավիճակ, իշխանություն և ազդեցություն. սա հանգեցրեց կառավարական պաշտոնյաներ ընտրելու և նշանակելու իննաստիճան համակարգի ձևավորման: Տեղի ունեցավ նաև մեկ այլ փոփոխություն. մարդկանց գնահատական տալուց բացի գնահատվում էին նաև պոեզիան, նկարներն ու վայելչագրական ստեղծագործությունները: Այսպիսով, պաշտոնյաներ ընտրելիս մարդուն գնահատելու դերը նվազեց, մինչդեռ ավելի կարևոր նշանակություն տրվեց արվեստի գնահատմանը: Սա մեծ ազդեցություն ունեցավ գրաքննադատության վրա Հարավային և Հյուսիսային դինաստիաներում և հանգեցրեց պոեզիայի, նկարչության և վայելչագրության ոլորտում գրաքննադատական ստեղծագործությունների առաջացմանը:

Մեջբերումներ

Սու Շաոն և Սու Չինը հայտնի մարդիկ էին Ռուանում. նրանք սիրում էին մեկնաբանություններ անել իրենց համաքաղաքացիների մասին և ամեն ամիս փոխում էին այն մարդկանց, որոնց արարքները մեկնաբանում էին: Տեղացիները նրանց այդ գործունեությունն անվանում էին «ամենամայա գնահատում»: (*«Հան դինաստիայի ուշ շրջանի պատմությունը»*)

Հայտնի գրողների ստեղծագործությունների ժողովածուները նպատակ ունեն ոչ թե համեմատել նրանց գրական ձեռքբերումները, այլ լայն համատեքստում մեկտեղել նրանց երկերը: «Պոեզիայի քննադատություն» գիրքը, որը կազմել

եմ ես, սակայն, միայն հինգ տառանշանով չափածո ստեղծագործությունների ժողովածու է: Քանի որ բոլոր բանաստեղծներն ու նրանց գլուխգործոցներն արդեն իսկ ներառված են այլ ժողովածուներում, ինչ ներառում է միայն 120 բանաստեղծի գործեր՝ դրանց արժանիքների և թերությունների մասին մեկնաբանություններով: (Ջուն Ռուն. «Պոեզիայի քննադատության» նախաբան)

ցիջեն 奇正

Յի կամ Ջեն / Անսպասելի կամ ճակատային

Յի (奇) նշանակում է անակնկալ, իսկ *ջեն* (正)՝ ուղղակի և սովորական: Գաղափարը, որն առաջին անգամ առաջադրել է Լաոցզին, ունի երկու հիմնական իմաստ: Նախ, այն ռազմական եզրույթ է, նշանակում է կռվի երկու հակադիր ձև: Ջեն նշանակում է դեմ առ դեմ հանդիպել թշնամուն՝ հասկանալով նրա մտադրությունը, իսկ Յի նշանակում է թաքցնել մտադրությունը, անսպասելի հարձակում սկսել ու դարանակալել թշնամուն՝ այդպիսով ապահովելով անակնկալ հաղթանակ: Ջենը և ցին պետք է կիրառել համակարգված ձևով: Որպես ռազմական եզրույթ՝ ցիջենընաև կիրառվում էր առօրյա հարցերում: Երկրորդ, որպես գրականության և արվեստի քննադատության եզրույթ՝ այն նշանակում է, որ հողվածը ազնիվ ու ինքնատիպ է թեմայի առումով, նրբագեղ ու նորաոճ՝ առձանության առումով: Լիու Սյեն (465?–520) Հարավային դինաստիայից առաջինն էր, ով ցիջեն եզրույթը ներմուծեց գրաքննադատության ոլորտ՝ հակադրելով այն ձևին ու նորարարությանը տրվող չափազանց մեծ կարևորությանը, միտում, որը տարածված էր Յի և Լյան դինաստի-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

աների գիտական շրջանակներում: Լիու Սյեն պնդում էր, որ գրական ստեղծագործությունը պիտի հիմնված լինի կոնֆուցիական դասական երկերի թեմաների վրա և զարդարված լինի նորաճ հռետորաբանությամբ: Նա հավատացած էր, որ մաքուր միտքը (ջեն) պետք է նախորդի հռետորաբանությանը (ցի), որպեսզի էսսեն թեմայի տեսանկյունից լինի ինքնատիպ, իսկ առողջանության առումով՝ գեղեցիկ, բայց չչափազանցված: Ցիջեն եզրույթը հետագայում նաև օգտագործվում էր պոեզիայի և օպերայի քննադատության մեջ:

Մեջբերումներ.

Պետությունը պետք է կառավարել սովորական ձևով, կռիվը վարել անակնկալ կերպով, իսկ իդեալական կառավարությունը պիտի ժողովրդին թույլ տա ինքնուրույն վարել իր գործերը: («*Լսոցզի*»)

Բոլոր պատերազմական իրավիճակներում ամենաուղիղ միջոցը թշնամուն դեմ առ դեմ հանդիպելն է, բայց հաղթանակ ապահովելու համար պետք է անակնկալ հարձակում սկսել: Նա, ում հաջողվում է անակնկալ հարձակում գործել, իր տրամադրության տակ կունենա մարտավարական հնարքների հարուստ շտեմարան՝ անսպառ, ինչպես Երկինքն ու Երկիրը, և անվերջանալի, ինչպես գետերի ու վտակների հոսքը: («*Պարտերազմի արվեստը*»)

Հետևյալ վեց չափանիշները պետք է կիրառվեն հողված կարդալիս և այն մեկնաբանելիս. կառուցվածք, առողջանություն, շարունակականություն և փոփոխություն, նոր և ավանդական տեխնիկական միջոցների կիրառում (*ցի* և *ջեն*), այլաբանությունների, ռիթմի ու վանկաչափության օգտագործում: (Լիու Սյեն. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

ցիյուն 气韵

Գեղարվեստական հմայք

Եզրույթը խորհրդանշում է նկարների, ինչպես նաև վաճառագրական և գրական ստեղծագործությունների իմպուլսը, հմայքնու կենսունակությունը, որոնք միասին ստեղծում են գեղարվեստական գրավչություն: Եզրույթը սկզբում վերաբերում էր միայն նկարներին և նշանակում, որ թանաքի ու նկարչական վրձնի պատշաճ օգտագործման շնորհիվ հաջողվել է վառ ներկայացնել բնապատկերը, ստեղծել կենսունակ կտավ և դիտողներին հնարավորություն տալ գնահատել նրա հիմքում ընկած գրավչությունը: Հետագայում եզրույթը վերաբերում էր նաև պոեզիային, էսսեներին, վայելչագրությանն ու այլ գրական ստեղծագործությունների: Գեղարվեստական հմայքը, որն իմաստով նման է գեղարվեստական գրավչություն և գրական գրավչություն եզրույթներին, գեղագիտական գնահատական է, որը ձեռք է բերվում փորձի ու զգացմունքների միջոցով: Արվեստի գործի գեղարվեստական հմայքն արտացոլում է հեղինակի յուրօրինակ մոտեցումն արվեստին ու ներշնչանքին՝ մի բան, որը ոչ թե ձեռքբերվի է, այլ ի սկզբանե հատուկ է մարդուն:

Մեջբերումներ.

Գոյություն ունի նկարի վեց օրենք: Նկարը պիտի օժտված լինի կենսունակությամբ և գեղարվեստական հմայքով. նկարչական վրձինը պետք է օգտագործել այնպես, որ այն փոփոխություններ մտցնի բնական գծերի մեջ. պատկերված նկարը պիտի համապատասխանի պատկերվող առարկայի արտաքին տեսքին. գունավորումը պիտի համապատասխան-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

նի պատկերվող առարկայի առանձնահատկություններին. նկարը պիտի ունենա ճիշտ կառուցվածք, որով ընդհանուր տեսողական ազդեցություն կթողնի. իսկ անցյալի նկարիչների գլուխգործոցները պիտի կրկնօրինակվեն՝ դրանցից ներշնչանք ստանալու համար: (Միե Հե. «Հնագույն նկարների գնահատում»)

Գոյություն ունի գեղարվեստական հմայքի երկու տեսակ՝ համապատասխանաբար թանաքի և նկարչական վրձնի օգտագործման համար: Թանաքի օգտագործման արդյունքում ստացված գեղարվեստական գրավչությունը սիրով գնահատվում է, սակայն հեշտ չէ գնահատել գրավչությունը, որն առաջանում է նկարչական վրձնի օգնությամբ: (Ֆան Սուն, «Նկարչության մասին»)

ցյան լի ջի սին, շի յու ցու սյա 千里之行, 始于足下

Հազար լի երկարությամբ ուղևորությունը սկսվում է առաջին քայլից

Ցանկացած խոշոր նախաձեռնություն պետք է սկսվի փոքր քայլերից: Արտահայտությունն ի հայտ է եկել «Լաոցզիից»: *Ցուսյա* (足下) նշանակում է այն տեղը, որտեղ կանգնած է մարդը: Լաոցզին օգտագործում էր հսկա ծառի, բարձր հարթակի, երկար ուղևորության փոխաբերությունները՝ երկու տարբեր գաղափար ներկայացնելու համար՝ 1. Համապատասխան կանխարգելիչ միջոցներ պիտի ձեռնարկվեն, քանի դեռ խնդիրները կամ անախորժություններն էլ ավելի չեն սրել իրավիճակը: 2. Բոլոր նախաձեռնությունները պետք է սկսել ամենաառաջին քայլից, քանի որ հաջողությունը կամ ձախողումը հաճախ կախված են լավ մեկնար-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

կից լայն իմաստով՝ հեռու իդեալներին ու ձգտումներին հասնելը կախված է ճանապարհի ընթացքում բազմաթիվ գործնական քայլերից, որոնք կօգնեն հասնելանիրագործելի թվացող նպատակին:

Մեջբերումներ.

Հսկա ծառը, որի շուրջ մի քանի մարդ կարող է օղակ կազմել, աճել է մի փոքրիկ ընձյուղից. ինը հարկից բաղկացած հարթակը կառուցվել է բազմաթիվ զամբյուղներով հող կուտակելով, իսկ հազար լի երկարությամբ ուղևորությունը սկսվում է առաջին քայլից: (*«Luangqih»*)

ցիան սյան միառ դե 迁想妙得

Ոգեշնչող ստեղծագործություն՝ հիմնված մտածողության մեջ զուգորդման վրա

Ըստ այս գաղափարի՝ նկարիչը պետք է կարողանա հաջողությամբ զուգորդումներ անել մտքում՝ գեղարվեստական ըմբռնման և արարման մեջ: Նա պիտի լիակատար ազատություն տա երևակայությանն ու կապի ու վերակառուցի պատկերների ու նյութերի մեծ բազմազանություն, որպեսզի ստեղծվի հրաշալի նկար՝ թե՛ պատկերի, թե՛ ոգու առումով: «Մտածողության մեջ զուգորդումներ» արտահայտությունը շեշտում է երևակայությունը, ընտրությունը, կապն ու ըմբռնումը: Թեև քննարկվող թեման և սկզբնաղբյուր նյութերը վերցված են իրականությունից, նկարը բոլորովին էլ դրա պատճենը չէ: «Մտածողության մեջ զուգորդումները» նկարչին հնարավորություն են տալիս վերակառուցել իր մտքերն ու զգացմունքները ստեղծագործության պատկերային դաշ-

տում: «Ոգեշնչող ստեղծագործություն» արտահայտությունը շեշտում է լավ նկարի գեղագիտական ազդեցությունները, որոնք ի հայտ են գալիս «մտածողության մեջ զուգորդումներից»: Լավ նկարը պիտի ոչ միայն ստեղծի լավ պատկեր, այլև դիտողին հնարավորություն տա գնահատել դրա հիմնական ասեվիքը: Այսպիսի նկարը ոգեշնչող ստեղծագործություն է: «Չուգորդումներ մտածողության մեջ» և «ոգեշնչող ստեղծագործություն» գաղափարները միասին գեղարվեստական արարման գործընթացի անբաժան մասն են: Այս գաղափարը գեղարվեստական ըմբռնման և գեղագիտական գնահատման ամենավաղ սահմանումն է Չինաստանում. հետագայում այն դարձավ չինական նկարչության տեսության կարևոր և հիմնարար սկզբունք:

Մեջբերումներ.

Մարդկանց նկարելն ամենադժվարն է. պակաս դժվար է նկարել բնապատկեր, ապա՝ կենդանիներին, օրինակ՝ շներին ու ձիերին: Տաղավարները, որոնք անշարժ առարկաներ են, նույնպես բարդ է նկարել, բայց հեշտ է ստեղծել դրանց ճշգրիտ պատկերը, որովհետև այդ գործընթացը չի պահանջվում մտածողության մեջ զուգորդումների վրա վրա հիմնված ներշնչանք: (Գու Կայջի. «Նկարչության մասին»)

Կու Կայջին երկար մտածում էր նկարելուց առաջ՝ գործի դնելով թե՛ տեսողությունը, թե՛ միտքը: Նրա նկարները ստեղծվում էին թանաքի ու նկարչական վրձինների օգնությամբ, բայց նրա գեղարվեստական գրավչությունն ու հմայքը դուրս են եկել նկարների սահմաններից և հասել բարձր ամպերին: (Ջան Հուայգուան. «Նկարների գնահատում»)

ցինցին 亲亲

Կապվածություն ազգակիցների հետ

Եզրույթը վերաբերում է ազգակիցների, մասնավորապես ծնողների հետ կապվածությանը: Սա բնական կապվածություն է, ինչպես նաև զգացմունքների արտահայտման ձև: Ըստ կոնֆուցիականության՝ այսպիսի սերը պետք է նաև տարածվի ուրիշների վրա, որպեսզի նպաստի հանրության առաքիճությանը: Չափազանց մեծ սերն ազգակիցների նկատմամբ, սակայն, կարող է հանգեցնել ֆավորիտիզմի: Ուստի կոնֆուցիականությունն արդարամտությունը համարում է սեփական ազգակիցների հանդեպ չափից դուրս սերը սանձելու միջոց:

Մեջբերումներ.

Ծնողներին սիրելը բարի է. ավագ եղբայրներին մեծարելը ճշմարիտ է: Առաքիճություն խթանելը ոչինչ չի պահանջում, բացի հարազատների հանդեպ սերը աշխարհի բոլոր մարդկանց վրա տարածելուց: (*«Մեկնիուս»*)

Բարյացակամությունը մարդու էությունն է, որն արտահայտվում է հարազատների հանդեպ սիրո մեջ: Արդարությունը ճիշտ պահին արված ճիշտ քայլն է, որն արտահայտվում է առաքիճի ու խորաթափանց մարդկանց հանդեպ հարգանքով: Հարազատների և այլոց հանդեպ սերը պետք է տարածվի նաև այլ հարաբերությունների վրա. նույն մոտեցումը պետք է որդեգրել առաքիճի և խորաթափանց մարդկանց հետ հարաբերություններում: Սրանից սկիզբ են առնում ծեսերը: (*«Ծեսերի գիրքը»*)

ցինմին 清明

Յինմինի փառատունը

Սա չորս խոշոր ավանդական փառատոններից մեկն է, որ տոնում են չինացիները՝ Գարնան փառատոն, Յինմինի փառատոն, Վիշապի նավակի փառատոն և Միջաշնանային փառատոն: Սա միակ չինական փառատոնն է, որը նշվում է ավանդական օրացույցի արևային ժամանակահատվածներից մեկի ընթացքում, սովորաբար ապրիլի 4-ին, 5-ին կամ 6-ին: Մինչ Թան դինաստիան Յինմինը համարվում էր 24 արևային ժամանակահատվածներից մեկը, որն արտացոլում էր տարվա եղանակների բնական փոփոխությունները և սերտորեն կապված էր գյուղատնտեսական աշխատանքների ժամանակացույցի հետ: Թան և Սուն դինաստիաներից հետո Յինմինը զբաղեցրեց Հանշիի («Սառը ուտելիք») փառատոնի տեղը, իսկ նախնիների գերեզմանները մաքրելու և սառը ուտելիք ճաշակելու պրակտիկան դարձավ Յինմինի փառատոնի հայտնի առանձնահատկություններից մեկը: Տարվա այս ժամանակահատվածում, գալիք գարնան շնչի հետ, բոլոր շնչավորները լի են կենսունակությամբ, մարդիկ դուրս են գալիս զբոսանքի, ուռենիներ են տնկում, օդապարուկներ թռցնում և ճոճանակ նստում: Մինչ օրս էլ Յինմինի փառատոնը հատուկ նշանակություն ունի չինացիների համար: 2006 թվականի մայիսի 20-ին Չինաստանի կառավարությունն այն ընդգրկեց ազգային ոչ նյութական ժառանգության ցուցակի առաջին տեղում:

Մեջբերումներ.

Յինմինի մանրամաղ անձրևի տակ / Մի ճամփորդ է քայլում, ծանրացած սրտով: /Նա հարցնում է՝ «Որտե՞ղ պանդուկ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

զտնեն»։ / Ի պատասխան՝ մի հովիվ ցույց է տալիս գյուղի կողմը, որտեղ ծաղկել են ծիրանի ծառեր։ (Գու Մու. «Ցին-մին»)

Երբ ծիծեռնակները վերադառնում են, սկսվում է Գարնան ծեսը։ /Իսկ երբ թափվում են տանձենու ծաղիկները, ուրեմն Ցինմին է։ (Յան Շու. «Փոջենցի»)

**ցյուն ցե բիան, բիան ցե թուն,
թուն ցե ձիու 穷则变, 变则通, 通则久**

Ծայրահեղություն - Փոփոխություն - Շարունակություն

Երբ իրերը հասնում են ծայրահեղ կետի, տեղի է ունենում փոփոխություն. փոփոխությունից հետո դրանք զարգանում են և շարունակում գոյություն ունենալ երկար ժամանակ։ Գաղափարն առաջացել է «Փոփոխությունների գիրքի» այն փոփոխության սկզբունքները հասկանալու միջոց է։ Ըստ այս տեքստի՝ իրերն անընդհատ փոփոխվում են, ու երբ հասնում են իրենց ծայրահեղ կետի, զարգանում են հակառակ ուղղությամբ։ Անհրաժեշտ է, որ մարդիկ հասկանան փոփոխության ուղին, ինչպես ներկայացնում է «Փոփոխությունների գիրքը», ծայրագույն կետին հասնելով փնտրեն շրջադարձը և թեթևացնեն փոփոխությունը, որ այն ազդի իրենց սահուն ու երկարատև զարգացման վրա։

Մեջբերումներ.

«Փոփոխությունների գիրքը» պարզաբանում է, որ երբ իրերը հասնում են ծայրագույն կետին, տեղի է ունենում փոփոխություն։ Փոփոխությունից հետո սկսվում է դրանց սահուն զարգացումը, այսպիսով նրանց գոյությունը շարունակ-

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

վում է երկար ժամանակ: Ահա թե ինչպես է «Երկինքը օգնություն շնորհում մարդկային աշխարհին ու բարիք բերում բուրրին»: («Փոփոխությունների գիրքը»)

ցուիթուն-ցունյի 求同存异

Փնտրիր ընդհանուր հիմք՝ մի կողմ դնելով տարբերությունները

Եզրույթը նշանակում է՝ փնտրել համաձայնության եզրեր՝ մինևույն ժամանակ պահպանելով կարծիքի տարբերությունները: Պատերազմող պետությունների շրջանի գիտնականները, օրինակ՝ Հուի Շին (մթա. 370?-310?) և Ջուանցին (մթա. 369?-286) հավատացած էին, որ իրերի մեջ տարբերություններն ու հակաթեզերը հարաբերական են, իսկ տարբերությունների մեջ գոյություն ունեն ընդհանրություններ: Գիտելիության տեսանկյունից, բոլոր իրերի / երևույթների միջև տարբերությունները հարաբերական են, և միշտ հնարավոր է, որ մի երևույթը ձևափոխվի հակառակ երևույթի: Կոնֆուցիական մշակույթը և մասնավորապես Կոնֆուցիոսը (մթա. 551-479), շեշտում էր, որ մարդկանց և պետությունների միջև հարաբերություններում «ներդաշնակություն՝ առանց միօրինակության» վիճակին պետք է հասնել համաձայնության միջոցով, միայն եթե ճանաչվեն և ընդունվեն կողմերի տարբերությունները: Բոլոր կողմերի միջև հնարավոր ամենամեծ համաձայնության կարելի է հասնել տարբերությունները ճանաչելով կամ մի կողմ դնելով: Նման համաձայնության հասնելու համար մարդիկ պետք է ընդունեն մշակույթների ու արժեքների բազմազանությունը և չձգտեն բացարձակ համերաշխության կամ հարկադիր համաձայնության. խնդիրները պիտի հնարավորինս դիտարկվեն ու-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րիշների տեսանկյունից: Այս մոտեցումը հետագայում դարձավ Չինաստանի արտաքին հարաբերությունների կարևոր սկզբունք:

Մեջբերումներ.

Երբ գոյություն ունեն խոշոր ընդհանրություններ և մանր տարբերություններ, կամ մանր ընդհանրություններ և խոշոր տարբերություններ, սա կոչվում է «մանր ընդհանրություն և տարբերակում»: Երբ իրերն ամբողջությամբ նույնական են կամ ամբողջությամբ տարբեր, այս երևույթը կոչվում է «խոշոր ընդհանրություն և տարբերակում»: (*«Ջուանցի»*)

Առաքինի մարդը ձգտում է ներդաշնակության, բայց ոչ համերաշխության. դատարկ մարդը ձգտում է համերաշխության, բայց ոչ ներդաշնակության: (*«Անալեկյուներ»*)

սանսին-ուուշեն 三省吾身

Օրական մի քանի անգամ մտորիր քո մասին

Հաճախ խորհել սեփական արարքների մասին. սա առաքինության ինքնուրույն զարգացման ձև է, որը պաշտպանում է Կոնֆուցիականությունը: Մտքի այս դպրոցի պնդմամբ՝ քանի որ բարոյական ամբողջականությունը կայանում է ինքնակրթության միջոցով, մարդը մշտապես կարիք ունի քննել իր խոսքերն ու արարքները, ինչպես նաև այն, ինչ կա մտքում. սա ինքնազարգացման հիմնարար միջոց է: Մասնավորապես Յենցին շեշտում է, որ մարդն ամեն օր պետք է մի քանի անգամ մտածի, թե արդյոք կատարել է այլոց հանդեպ իր պարտականությունները, արդյոք բարյացակամ է եղել մարդկանց նկատմամբ և արդյոք դիտարկել է

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

սովորածը, որպեսզի իմանա՝ բարելավման կարիք դեռ կա՞, թե՞ ոչ:

Մեջբերումներ.

Յենցին ասում էր. «Ամեն օր մի քանի անգամ խորհում եմ. արդյո՞ք ջանացել եմ օգնել մեկնումեկին իմ խորհրդով: Արդյո՞ք կատարել եմ ընկերներիս տված խոստումս: Արդյո՞ք դիտարկել եմ, թե ինչ եմ սովորել»: (*«Անալեկտրներ»*)

շան բին ֆա մոու 上兵伐谋

Պատերազմում լավագույն ռազմավարությունը թշնամու ռազմավարությունը կասեցնելն է

Թշնամու ռազմավարությունը կասեցնելը կարևոր սկզբունք է, որն առաջարկել է Մունցին (մթա.545?-470?): Նրա կարծիքով՝ (մթա.545?-470?) պատերազմը մղվում է տարբեր մակարդակներում, որոնցից յուրաքանչյուրը նշանակալի ազդեցություն ունի արդյունքի վրա: Չինված հարձակումները կարող են մեծ վնաս հասցնել երկու կողմին էլ, ուստի հնարավորության դեպքում պետք է խուսափել դրանցից: Նրանք, որոնց հաջողվում է բանակներ առաջնորդել, պետք է կարողանան օգտվել ռազմական հնարքներից՝ նախապես չեզոքացնելով թշնամու հարձակման սպառնալիքը կամ վերացնելով այն խոչընդոտները, որոնք սեփական ռազմական ուժերին թույլ չեն տալիս իրագործել ռազմավարական նպատակները:

Մեջբերումներ.

Պատերազմում լավագույն ռազմավարությունը թշնամու ռազմավարությունը կասեցնելն է, հաջորդը՝ թուլացնել նրանց դաշնակիցներին, իսկ մյուսը՝ հարվածել նրանց գորքերին, և ամենավատը՝ հարձակվել նրանց պարսպապատ քաղաքների վրա: Պետք է հնարավորինս խուսափել պարսպապատ քաղաքների վրա հարձակվելուց: (*«Պատերազմի արվեստը»*)

շեշեն-ցույի 舍生取义

Չոհեյ սեփական կյանքը՝ հանուն արդարության

Այս համոզմունքը պաշտպանում է Մենցիուսը (մթա. 372-289): Նրա պնդմամբ՝ արդարության պահպանումը արժանապատիվ մարդու կարևորագույն հատկանիշն է, առանց որի մարդը կկորցնի իր բարոյական դիրքը: Կյանքն անգին է, բայց գոյատևելը կյանքի միակ կարևոր հանգամանքը չէ: Երբ կանգնում ես կյանքը փրկելու և արդարությունը պաշտպանելու ընտրության առաջ, պետք է Չոհեյ կյանքը՝ հանուն արդարության:

Մեջբերումներ.

Թե՛ կյանքը, թե՛ արդարությունը կարևոր են ինձ համար: Սակայն, եթե միաժամանակ երկուսի գոյությունն անհնար է, կյանքս կտամ, որ պաշտպանեմ արդարությունը: (*«Մենցիուս»*)

շեն յի ջի ջեն 审音知政

Գնահատիր կառավարումը՝ երաժշտություն լսելով

Եզրույթը կոնֆուցիական գրական մտածողության օրինակ է: Կոնֆուցիական գիտնականները հավատացած էին, որ երաժշտությունն արտահայտում է ժողովրդի մտածողությունն ու զգացմունքները, ուստի երկրի երաժշտությունն արտացոլում է, թե արդյոք կառավարումնարդար է, արդյոք ժողովուրդն ապրում է բարեկեցիկ կյանքով, և արդյոք հասարակական մթնոլորտը բարյակացական է ու անկեղծ: Ըստ Ցուոյի «Մեկնաբանություններ «Գարնան և ամռան տարեգրքերի մասին»» գրքի՝ Գարնան ու աշնան ժամանակահատվածում Լու նահանգ կատարած իր դիվանագիտական առաքելության ընթացքում Վու նահանգի Չիջա արքայազնն իմացավ այն ժամանակ գոյություն ունեցող զանազան նահանգների ու շրջանների կառավարման մասին՝ լսելով նրանց երաժշտությունը, որ կատարում էր Լուի ժողովուրդը: Թերևս հենց այստեղից է ծագել «գնահատել կառավարումը երաժշտություն լսելով» եզրույթը: Գաղափարն ի սկզբանե առաջ է եկել Ցին և Հան դինաստիաներում, երբ վերացել էր արվեստի ու կառավարության սահմանը, և գեղագիտությունը դարձել էր հանրային կյանքի մի մաս: Այն ձևավորվեց կոնֆուցիական գրական մտածողությունը, որը հիմնված էր կառավարման ու էթիկայի վրա, և քաղաքական ու բարոյագիտական ծավալ էր հաղորդում հին չինական գրական-գեղարվեստական տեսությանը:

Մեջբերումներ.

Այսպիսով, խաղաղ պայմաններում երաժշտությունն արտահայտում է անդորրություն ու երջանկություն, որի պատճառը լավ կառավարումն է: Խառնակ ժամանակներում երաժշտությունն արտահայտում է դժգոհություն և բարկություն, որի պատճառը քաղաքական խառնաշփոթն է: Կործանման եզրին գտնվող պետության երաժշտությունը մատնում է վիշտն ու անհանգստությունը, քանի որ ժողովուրդը տառապում է: Այսպիսով, պետության երաժշտության ու նրա կառավարման միջև կապ կա: (*«Ճեսերի գիրքը»*)

Բոլոր երաժշտական հնչյունները սկիզբ են առնում մարդկային մտքից: Երաժշտությունը կապված է հասարակական էթիկայի հետ: Հետևաբար, նրանք, որ ճանաչում են հնչյունները, բայց գաղափաներ չունեն ելևէջների մասին, կենդանիներ են. նրանք, որ գաղափար ունեն ելևէջների մասին, բայց չգիտեն՝ ինչ բան է երաժշտությունը, հասարակ ժողովուրդ է: Միայն առաքինի մարդիկ կարող են իսկապես գնահատել երաժշտությունը: Հետևաբար, պետք է քննել հնչյունները՝ դրանց ելևէջներ իմանալու համար, և քննել ելևէջները՝ երաժշտությունն իմանալու համար: Եթե ուզում ես գնահատել երկրի կառավարումը, ուսումնասիրիր երաժշտությունը: Այսպես կառավարումը լիարժեք կլինի: (*«Ճեսերի գիրքը»*)

շենսյաո 生肖

Չինական կենդանակերպ / Տարվա կենդանին

Շենսյաո (生肖) բառը չինարենում վերաբերում է այն տասներկու կենդանիներին, որոնք կազմում են Չինական

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Կենդանակերպը: Հին չինացիներն այս ցուցակում ներառում էին տասնմեկ կենդանի, որոնք սերտորեն կապված էին գյուղատնտեսության հետ, գումարած վիշապը՝ լեզնդար կենդանի, որը մշակութային խորհրդանիշ է Չինաստանում: Հետագայում դրանք կապվեցին տասներկու Երկրային ճյուղերի հետ (տասներկուամյա շրջափուլում), և յուրաքանչյուրը ներկայացնում էր մեկ տարի: Այսպիսով, մարդու ծննդյան տարին նույնպես կապվում է որևէ հատուկ կենդանու հետ: Կենդանակերպը ճյուղերի հետ համադրելով՝ ստացվում է հետևյալ դասավորությունը. ցիշու (子鼠 առնետ), չուսիու (丑牛 ցուլ), յինհու (寅虎 վագր), մաոթու (卯兔 ճագար), չենլուն (辰龙 վիշապ), սիշե (巳蛇 օձ), վումա (午马 ձի), ուեյյան (未羊 ոչխար), շենհու (申猴 կապիկ), յուուձի (酉鸡 աքաղաղ), սուգու (戌狗 շուն) և հայջու (亥猪 խոզ): Կենդանակերպը գործածվում էր դեռևս Արևելյան Հան դինաստիայում, իսկ դրանից հետո եղել է չինական մշակույթի ու ժողովրդական ավանդույթի առանձնահատկություն: Այսօր չինական կենդանակերպի մշակութային ազդեցությունը դեռևս զգալի է մարդու ծննդյան տարվա կենդանու, ամուսնության, գուշակության ավանդույթի մեջ, փառատոնների ընթացքում և ժողովրդական արվեստի տեսակներում, ինչպիսին է, օրինակ, թղթից պատկերներ կտրատելը:

Մեջբերումներ

Երբ ապրում էի Վուչուան քաղաքում, ծնվեցիք դուք՝ երեք եղբայր: Ավագը Առնետ էր, միջնեկը՝ ճագար, իսկ դու՝ Օձ: («Հյուսիսային դինաստիաների պարմությունը»)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

շինյան-շումու, բայնյան շուսեն 十年树木, 百年树人

Ծառ աճեցնելու համար տասը տարի է պետք, տաղանդ դաստիարակելու համար՝ հարյուր տարի

Արտահայտությունն ակնարկում է, որ ծառ աճեցնելու համար երկար ժամանակ է պետք, իսկ տաղանդներ զարգացնելու համար՝ էլ ավելի երկար: Ներիմաստները երկուսն են. նախ, տաղանդը ճանաչելն ու դաստիարակելը հեռահար նշանակություն ունի երկրի և հասարակության զարգացման համար. երկրորդ, տաղանդ դաստիարակելը նախաձեռնություն է, որն իրագործվում է ռազմավարական տեսլականով, անընդհատ գործադրվող ջանքերով և ըստ բազմակողմանի ծրագրի:

Մեջբերումներ.

Տարվա ծրագիր կազմելիս ամենակարևորը բերք աճեցնելն է. տասնամյակի ծրագիր կազմելիս ամենակարևորը ծառեր աճեցնելն է. կյանքի ծրագիր կազմելիս ամենակարևորը տաղանդներ դաստիարակելն է: Բերք աճեցնելիս մեկ բերք ես ստանում, ծառեր աճեցնելիս՝ տասնապատիկ բերք, իսկ տաղանդներ դաստիարակելիս՝ հարյուրապատիկ բերք: («*Գուանցի*»)

Շի Ժ

Ժամանակ / Ժամանակի ընտրություն

Շի (Ժ Ժամանակ կամ Ժամանակի ընտրություն) ունի հետևյալ երեք իմաստը. նախ, Բնության հաջորդականությունը կամ օրենքները, ինչպիսիք են գարունը, ամառը, աշ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ունը և ձմեռը, կամ ժամերը, որոնք խորհրդանշում են ժամանակի փոփոխությունը ցերեկվա և գիշերվա ընթացքում. երկրորդ, որոշակի երկնային երևույթ կամ կլիմայական պայման, որն ազդում է մարդկային գործունեության վրա, ինչպիսիք են, օրինակ, գյուղատնտեսության սեզոնները կամ այլ գործունեության ժամանակի ընտրությունը. երրորդ, ճիշտ ժամանակը կամ հնարավորությունը, որն ի հայտ է գալիս մարդկային գործունեության ընթացքում: Ժամանակի ընտրության առաջացումը կամ անհետացումը կառավարվում է Բնության կամ մարդկային վարքագծի օրենքներով: Մարդիկ պետք է լիովին հասկանան և տիրապետեն ժամանակին կամ ժամանակի ընտրությանը և դրա օրենքներին և գործեն դրանց համապատասխան:

Մեջբերումներ.

Բնությունը երբևէ որևէ բան ասել է: Տարվա չորս եղանակներն ընթանում են ցիկլային հաջորդականությամբ, և ամեն ինչ աշխուժորեն աճում է: Բնությունը որևէ բան ասել է: (*«Անսլեկորներ»*)

Գաղարեցրու աշխատանքը, երբ սխալ ժամանակ ես ընտրել, գործիր, երբ ժամանակը բարենպաստ է: Շարժվիր ու կանգ առ ժամանակի թելադրանքով: (*«Փոփոխությունների գիրքը»*)

շիսու 时序

Փոխվիր ժամանակների հետ

Եզրույթը ենթադրում է, որ գրական ստեղծագործությունն իր վրա կրում է ժամանակների փոփոխության ազդեցությունը: Գրող, գրականագետ Լիու Սյեն, որը կիրառում էր այս

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

եզրույթը, նշում էր, որ գրական ստեղծագործությունը մեկուսացված երևույթ չէ: Ավելին, այն իր վրա կրում է բազմաթիվ պատմական գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են գերիշխող հասարակական և քաղաքական պայմանները, կառավարիչների անձնական նախասիրությունները, ինչպես նաև ինտլեկտուալ միտումները:

Մեջբերումներ

Այսպիսով, մենք գիտենք, որ երգերն ու գրական ոճը փոխվում են ժամանակների հետ, ինչպես երբ քամի է փչում, տարուբերվում են ջրի ալիքները: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

Համաշխարհային իրադարձություններն ազդում են գրական փոփոխությունների վրա: Գրական ոճի ժողովրդականության վերելքը և անկումը ժամանակի փոփոխության արդյունք են: (Լիու Սյե. «*Գրական միտքն ու վիշապներ քանդակելը*»)

շի 史

Պատմություն

Կրիայի պատյանի և ցլի թիակոսկրի, ինչպես նաև հին բրոնզե առարկաների վրա արված արձանագրություններում պիկտոգրաֆիկ չինարեն *շի* (史) տառանշանը պատկերված է ձեռքի տեսքով, ձեռքում՝ գրելու վրձին կամ բամբուկի թերթ. այն ներկայացնում է դասական պաշտոնյայի, որը պատասխանատու է պատմական արձանագրությունների պահպանման համար: Սու Շենը (58?-147) Արևելյան Հան դինաստիայում գրված իր «Գրի բացատրություն և տառան-

շանների լուսաբանում» գրքում գրում է. «Շին այն մարդն է, որն արձանագրում է իրադարձությունները: Կենտրոնում պատկերված ձեռքը խորհրդանշում է արդարության պահպանումը»: Նույնհնչողությամբ, տարբեր ձևով գրվող երկու չինարեն տառանշանները՝ շի (史 պատմություն) և շի (事 իրադարձություններ), ունեն նույն ծագումը. մարդը, որը գրանցում է տեղի ունեցող իրադարձությունները, կոչվում է շի (史 արձանագրություն կազմող), իսկ այն, ինչ նա գրի է առնում, կոչվում է շի (事 արձանագրություններ): Հետագայում թե՛ պատմական դեպքերի կամ իրադարձությունների արձանագրությունները կազմող պաշտոնյաները, թե՛ դեպքերի կամ իրադարձությունների հավաքածուները, թե՛ դրանց մասին մեկնաբանությունները նույնպես կոչվում են շի (史), որը բառացի նշանակում է պատմություն: Ըստ Սու Շենի՝ շի չինարեն տառանշանը ներկայացնող նախնական պիկտոգրաֆը նման է ձեռքի, ինչը նշանակում է օբյեկտիվորեն, անկողմնակալարձանագրել պատմական դեպքերը կամ իրադարձությունները: Մի ժամանակ շեշտը դրվում էր պատմությունն արձանագրելու վրա, որոշ ժամանակահատվածներում նույնիսկ ինքնիշխան կառավարիչներին արգելված էր միջամտել պատմական դեպքերի կամ իրադարձությունների արձանագրման համար պատասխանատու պաշտոնյաների գործերին: Մի կողմից պատմական դեպքերը կամ իրադարձությունները արձանագրելով՝ այս պաշտոնյաները զսպող գործառույթ էին կատարում կառավարիչների համար, որոնք ստիպված էին զգույշ լինել խոսքի ու գործի մեջ: Մյուս կողմից, պատմական կերպարները կամ իրադարձությունները ներկայացնելով կամ մեկնաբանելով կարելի էր դասեր քաղել կամ օրինակներ ներկայացնել, իսկ կառավարիչները

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

հնարավորություն ունեին մտորել դրանց շուրջ և օրինակ վերցնել դրանցից: Այս ավանդույթը չինացի ժողովրդի մարդասիրական և ռացիոնալ ոգու կարևոր կողմն է:

Մեջբերումներ.

Այս մարդիկ ճնշված էին և ի գորու չէին հասնել իրենց իդեալներին: Հետևաբար, նրանք գրի էին առնում այն, ինչ տեղի էր ունենում, որպեսզի հետագա սերունդները հասկանային իրենց: (Սիմա Յյան. «Պարասիսան նամակ Բեն Անի»)»

Հին ժամանակներից ի վեր բոլոր պետությունների վերելքի ու անկման պատճառները կարելի է գտնել գրքերում. թե հարյուրավոր կայսրեր ինչու էին գործում բարի կամ չար արարքներ, նույնպես կարելի է կարդալ դասական և պատմական գրքերում: Օրինակներն առ այն, թե ամենաթողությունն ինչպես է աղետների պատճառ դառնում, իսկ լավ արարքները՝ հաջողություն բերում, ամենուրեք են, ինչպես մեր սեփական սովերները, և նույնքան ակնհայտ են, ինչպես արևն ու լուսինը, նույնքան ակներև, ինչպես նկարը: (Ջաո Պու. «Հիշողություն առ այն, թե կայսր Թայցունն ինչպես հետ կանչեց գորքերին»):

շիուայ-թաոյուան 世外桃源

Ծաղկած դեղձենիների երկիր

/Հովվերգական գեղեցկության երկիր

Իր «Ծաղկած դեղձենիների գարուն» էսսեում Թաո Յուանմինը (365?-427) Չին դինաստիայից նկարագրում է բնական գեղեցկությամբ հովվերգական մի վայր, որն ասես կտր-

Չինական ստրի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ված լինի արտաքին աշխարհից, հեռու պատերազմական ավերածություններից, ազատ քաղաքական ճնշումներից, տեղ, որտեղ մարդիկ ապրում են հավասարության, ազատության, ներդաշնակության, խաղաղության ու երջանկության մեջ: Ավելի ուշ արտահայտությունը նշանակում էր երևակայական իդեալական հասարակություն կամ վայր, ինչպես նաև ապաստան, որը զուրկ է նյութական գալթակություններից, որտեղ մարդը կարող է ապրել մեկուսացած ու խաղաղ:

Մեջբերումներ.

Աչքերի առաջ փռվում է լայն ու հարթ երկիրը, որի վրա տեղ-տեղ նշմարվում են կոկիկ կառուցված տներ: Բերրի դաշտեր են, գեղատեսիլ լճեր, բամբուկի թփեր և թթենիներ: Դաշտերում արահետները ճյուղավորվում են բոլոր ուղղություններով, հավիկները կշկշում են, իսկ շները՝ հաչում: Մարդիկ աշխատում են դաշտերում. նրանք ճիշտ նույն հագուստով են, ինչ մյուս մարդիկ: Ճերմակահեր տարեցներն ու խմբված երեխաները երջանիկ ու գոհ են երևում: (Թաո Յուանմին. «Ծաղկած դեղձենիների գարուն»)

սույհան-սանյոու 岁寒三友

Չմռան երեք ընկեր / Կայուն, հավատարիմ ընկերներ

«Չմռան երեք ընկեր» արտահայտությունը խորհրդանշում է սոճի, բամբուկ և սալորենի: Ավանդական մշակույթում բույսերին ու կենդանիներին վերագրվում է որոշակի մարդկային բնութագիր՝ ըստ նրանց բնական որակների: Սոճին ու բամբուկը կանաչ են մնում ողջ տարվա ընթացքում, նույնիսկ

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

ամենացուրտ եղանակին, իսկ սալորենին ծաղկում է գարնան սկզբին, երբ դեռ ձյուն է ու սառնամանիք: Այս երեք բույսերը ցրտադիմացկուն են և պահպանում են իրենց գեղեցկությունը նույնիսկ դաժան եղանակային պայմաններում, ինչպես լավ ընկերները, որոնց ընկերությունը շարունակվում է նույնիսկ սառնաշունչ ձմռանը: Եզրույթը հաճախ խորհրդանշում է հավատարիմ և կայուն ընկերություն, ինչպես նաև մարդկային բարձրագույն որակներ՝ վեհանձնություն և անկողմնակալություն:

Մեջբերումներ.

Տարվա ամենացրտաշունչ եղանակին սոճին ու մայրին վերջինն են թառամում: (*«Անալեկյուններ»*)

Մինչև ուշ աշուն բոլոր ծաղիկները թառամում են: Միայն սոճին, բամբուկն ու սալորենին դեռ կենսունակ են, ուստի նրանց մմանեցնում են երեք կայուն ընկերների: (*«Պայրահական զրույց չկնորսի ու փայրահասրի միջև»*)

թաշանջիշի, քեյի-գունյու 他山之石, 可以攻玉

Ուրիշ սարից քարեր բեր, որ փայլեցնես նեֆրիտը

Արտահայտությունը, որն առաջացել է «Երգերի գրքից», ի սկզբանե Ջոուի Սյուան արքայի խորհրդից մի հատված է, երբ նա խորհուրդ էր տալիս հավաքագրել տաղանդավոր ճգնավորներին, որոնք պիտի աշխատեին իր երկրի համար: Ավելի ուշ այն դարձավ ուրիշների քննադատությունը սեփական սխալներն ուղղելու համար օգտագործելու և ինքնազարգացման նպատակով այլ մարդկանց և այլ երկրների փորձն ու պրակտիկան դիտարկելու այլաբանություն: Ար-

տահայտությունը խորհրդանշում է չինացի ժողովրդի լայնախոհությունն ու ուրիշների պրակտիկայից օգտվելու պատրաստակամությունը:

Մեջբերումներ.

Այգին այնքան գեղեցիկ է, /Այնտեղ սանդալի բարձր ծառ է աճում, /Ներքևում՝ կարճիկ ու բարակ թթենիներ: / Դրանց բների մոտ քարեր կան, /Որոնցով կարելի է փայլեցնել նեֆրիտը: (*«Երգերի գիրքը»*)

թյանլայ 天籟

Բնության հնչյուններ

Եզրույթը վերաբերում է այն հնչյուններին, որոնք արտաբերում են բնության բոլոր երևույթները երկնքի ու երկրի միջև: Ջուանցին (մթա. 369?-286) հնչյունները բաժանում էր երեք կարգի՝ «մարդկային հնչյուններ», «երկրային հնչյուններ» և «երկնային հնչյուններ»: Ըստ նրա՝ «մարդկային հնչյուններ» արտահայտությունը վերաբերում է այն հնչյուններին, որոնք հնչում են ուղղահայաց բամբուկից սրինգից, երբ նվագող օղը փչում է դեպի ծայրը: «Երկրային հնչյուններն» այն հնչյուններն են, որոնք արձակվում են երկրի ճեղքերից, երբ դրանցով քամի է անցնում: «Երկնային հնչյուններն» առանձնապես չեն տարբերվում վերը թվարկված երկուսից: Դրանք տիեզերքում բոլոր երևույթների՝ բնական ճանապարհով արձակված բազմազան հնչյուններն են, որոնք պայմանավորված չեն արտաքին գործոններով: Այսպես սահմանելով «բնության հնչյունները»՝ Ջուանցին նպատակ ուներ նվազեցնել սուբյեկտիվ մտքի ազդեցությունը, բացահայտել բոլոր երևույթների բնական վիճակը և հարգել այն: Հետագա սերունդներն ընդհանրապես օգտագործում էին

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

եզրույթը որևէ գրական երկ, օրինակ՝ բանաստեղծություն կամ էսսե նկարագրելիս, որը սահուն էր և ուներ բնական հմայք ու գրավչություն: Գործածում են նաև «բնության երաժշտություն» եզրույթը, որով կոչում են ականջին հաճո և բնական ճանապարհով ստեղծված հնչյունները:

Մեջբերումներ.

Յիյունն ասաց. ««Երկրային հնչյունները» լսվում են երկրի ճեղքերից, իսկ «մարդկային հնչյուններն» արձակվում են ուղղահայաց բամբուկե սրնգից: Այդ դեպքում իրենցից ի՞նչ են ներկայացնում «երկնային հնչյունները»: Յիցին պատասխանեց. «Երբ քամին փչում է երկրի վրա, տարբեր ճեղքերից զանազան հնչյուններ են արձակվում: Դրանք ստեղծվում են բնական ճանապարհով: Ուրիշ էլ ի՞նչը կարող է այդ հնչյունների պատճառ դառնալ»: (*Չուանցի*)

թույ՛են 推恩

Տարածիր բարեգործություն ու սեր

Մենցիուսը (մթա. 372-289) պաշտպանում էր այն միտքը, որ իշխանություն ունեցողները պետք է կառավարեն սիրով ու առատաձեռնությամբ: Նա հավատացած էր, որ բնությունից մարդիկ օժտված են իրենց համերկրացիների հանդեպ սիրով, բայց պետք է լայնորեն տարածել այդ սերը, որ կառավարումն իսկապես լինի բարեգործ ու առատաձեռն: Մերն ու բարեգործությունը սկսվում են ընտանիքից ու մոտ հարազատներից, բայց հետո պետք է տարածել դրանք բոլոր մարդկանց վրա: Մա է առատաձեռն և բարեգործ կառավարման հասնելու ճանապարհը:

Մեջբերումներ.

Հետևաբար, սերն ու առատաձեռնությունը տարածելով հնարավոր կլինի պահպանել ամբողջ երկրի կառավարումը. առանց դրանույնիսկ կնոջն ու երեխաներին հնարավոր չէ պաշտպանել: Հին ժամանակներում իմաստունները գերազանցում էին հասարակ մարդկանց, և դրա միակ պատճառն այն էր, որ նրանց հաջողվում էր իրենց բարոյական սկզբունքների ու վարքագծի ազդեցությունը տարածել հնարավորինս հեռու և լայնորեն: (*«Մենցիուս»*)

թուջի-ձիբեն 推己及人

Քեզ պատկերացրու ուրիշի փոխարեն

Եզրույթը նշանակում է մտքումենթադրել ուրիշների մտքերը: Սա ճիշտ այն է, ինչ կոնֆուցիականությունն անվանում է հանդուրժողականություն ուրիշների հանդեպ. այն մարդկանց մասին հոգ տանելու և փայփայելու կարևոր սկզբունք կամ մեթոդ է: Առաջին հերթին, ըստ այս ստանդորդյան, մարդիկ հիմնականում ունեն մեկ ընդհանուր ոգի: Ուստիև, պետք է պահպանել հանդուրժողականությունն ու բարեգործությունը: Անհրաժեշտ է նրբանկատլիներ ուրիշների հանդեպ, պատկերացնել, որ հենց դու ես նրա փոխարեն, ու փորձել հասկանալ նրան: Երբեք պետք չէ դիմացինի հետ վարվել այնպես, ինչպես չես ցանկանա, որ քեզ հետ վարվեն: Օգնիր դիմացինիդ ձեռք բերել այն, ինչ կուզեիր քեզ համար:

Մեջբերումներ.

Կարող ենք կռահել, թե ինչ են զգում ուրիշները, եթե մեզ պատկերացնենք նրանց փոխարեն: (*«Երգերի գիրքը»*)

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Ոչինչ ավելի մոտ չէ բարեգործությանը, որքան դիմացի-
նիդ կարեկցելը՝ քեզ նրա տեղում պատկերացնելով: (*«Մեն-
ցիուս»*)

Հավատարմությունն ու ներողամտությունը շատ մոտ են
ազնվության սկզբունքին, որը նշանակում է՝ երբեք ուրիշնե-
րին մի պարտադրիքի այն, ինչ ինքդ չես ցանկանում ընդունել:
(*«Ճեսերի գիրքը»*)

սի մու լի սին 徙木立信

**Շահիր մարդու վստահությունը՝ ժողովրդին
պարզևատրելով գերան շարժելու համար**

Ըստ «Պատմաբանի արձանագրությունների»՝ իր քաղա-
քական բարեփոխումներից առաջ մարդկանց վստահությու-
նը ձեռք բերելու համար Շան Յանը (մթա 390?-338) հայտա-
բարեց, որ ցանկացած ոք, ով կկարողանա 3 ջան (մոտավո-
րապես 7 մետր) երկարությամբ հսկայական գերանը հարա-
վային դարպասաշենից տեղափոխել մայրաքաղաքի շուկա-
յի հյուսիսային մուտք, առատորեն կպարզևատրվի: Գտն-
վեց մի մարդ բավական համարձակ մարդ, փորձեց և հաջո-
ղությամբ կատարեց առաջադրանքը, ուստի նրան անմիջա-
պես պարզևատրեցին բավական կլորիկ գումարով: Դրանից
հետո մարդիկ համոզվեցին, որ Շան Յանը միշտ կատարում
է խոստումը, և, հետևաբար, նա կարողացավ առանց խոչըն-
դոտի նոր հրամաններ արձակել: Այստեղ կարևորն գործո-
նը ժողովրդի վստահությանն արժանանալն է: Երկրի հրա-
մաններն առանց խոչընդոտի ընդունելու համար պետք է
նախ շահել ժողովրդի վստահությունը, ինչը պարտադիր
պայման է: Միայն այսպես կարելի է ձեռք բերել հասարակ
ժողովրդի աջակցությունն ու հավատարմությունը:

Մեջբերումներ.

Բարեփոխումների հրամանագրեր կազմելուց հետո և հրապարակելուց առաջ Շան Յանը, վախենալով, որ ժողովուրդը լուրջ չի ընդունի դրանք, մայրաքաղաքի շուկայի տարածքում՝ հարավային մուտքի առաջ, երեք ջան(մոտավորապես 7 մետր երկարությամբ) գերան կանգնեցրեց: Ապա հայտարարեց, որ ով կկարողանա գերանը հարավային մուտքից տեղափոխել հյուսիսային մուտք, կարժանանա 10 յի (մոտավորապես 200 պղնձե լյանին համարժեք) պարգևատրման: Մարդիկ տարօրինակ համարեցին այս պահանջը, և ոչ ոք առաջ չեկավ՝ գերանը տեղաշարժելու: Հետո Շանն ասաց. «Նա, ով կկարողանա տեղաշարժել գերանը, կարժանանա 50 յի (մոտավորապես 1000 պղնձե լյանին համարժեք) պարգևատրման»: Ապա մի մարդ առաջ եկավ ու գերանը տեղաշարժեց դեպի շուկայի հյուսիսային մուտքը: Շանը կատարեց իր խոստումը և անմիջապես նրան տվեց խոստացված պարգևավճարը: Այսպիսով, Շանը դրանից հետո կարողացավ հրապարակել բարեփոխումների հրամանագրերը: (*«Պատմաբանի արձանագրություններ»*)

սյանսու-բաոփու 见素抱朴

Պահպանել յուրօրինակությունը և ընդունել պարզությունը

Եզրույթը նշանակում է նկատի առնել և պահպանել իրերի բնական վիճակը: Գաղափարն առաջին անգամ հայտնվել է «Լաոցզի» գրքում: Մու (素) բառը նախնական իմաստով նշանակում է չներկված մետաքս, փու (朴) նշանակում է անմշակ փայտ կամ անտառանյութ: Լաոցզին այս եզ-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

րույթներն օգտագործում էրիրենց բնական, անխախտ վիճակում գտնվող մարդկանց ու առարկաներիննկարագրելիս: Նա հավատացած էր, որ իշխանավորները չպետք է փորձեն մարդկանց կամ երևութների վրա ազդել գաղափարներով կամ պահանջներով, որոնք հակասում են նրանց բնական վիճակին: Փոխարենը պետք է ուղղորդեն ժողովրդին հետ, դեպի պարզ, բնական ծագում: Հետագայում եզրույթը ձեռք բերեց այլ նշանակություն՝ «չազդվել արտաքին գործոններից և պահպանել նախնական, մաքուր էությունը»:

Մեջբերումներ.

Մի կողմ դիր իմաստությունը, և ժողովուրդը մեծապես կշահի. մերժիր արդարության պահանջները, և ժողովուրդը կվերադառնա իր բնական, բարեխիղճ զգացմունքներին. մոռացիր խաբեության ու շահույթի մասին, և գողերը կանհետանան: Ուսմունքները, արդարամտությունն ու խաբեությունը մարդու զարդարանքներն են, որոնք իրականում անտեղի են: Մարդը պիտի պահպանի իր բնական վիճակը և կախված լինի դրանից, ինչպես նաև նվազեցնի ցանկությունները: (*«Luangqih»*)

սյաո սան ձյան յուան 萧散简远

Բնական, անշտապ, պարզ, մինչդեռ խորիմաստ

Հասկացությունը վերաբերում է այն վայելչագրական ստեղծագործություններին, բանաստեղծություններին, էսսեներին ու այլ գրական ու գեղարվեստական գործերին, որոնք բնական են, հանդարտ, ոճով պարզ են, բայց ունեն խոր ներիմաստ: Բնական ու անշտապ ոճը մերժում է չափից դուրս

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

շատ զարդարանքները և չի համապատասխանում կոնկրետ ձևի: Սույն դինաստիայում Սու Շիի (1037-1101) ստեղծած այս հասկացությունը, որ նա նախատեսել էր՝ որպես գրական և գեղարվեստական քննադատության եզրույթ, մեծ ազդեցություն ունեցավ Մին և Ցին դինաստիաների գրական և գեղարվեստական ստեղծագործությունների վրա: Գաղափարը, որը հիմնված է Ջուանցիի մտքի վրա և ներառում է Չան ուղղության մտածողությունը, ընդգծում է անշտապ և պարզ լինելու անհրաժեշտությունը և կոչ անում խուսափել ինքնավստահությունից, ազատվել կանոնների ու օրենքների շղթաներից և ամեն ինչ ընդունել այնպես, ինչպես կա, որպեսզի գեղարվեստական ստեղծագործությունն օժտված լինի թեթևությամբ, պարզությամբ, ազատությամբ և բնական գեղեցկությամբ:

Մեջբերումներ.

Մի անգամ խոսում էի վայելչագրության մասին և ասացի, որ Ջուն Յաոյի և Ուան Սիջիի վայելչագրական ստեղծագործությունները բնական են, անշտապ, պարզ, միևնույն ժամանակ խորիմաստ, իսկդրանց գեղարվեստական գրավչությունը դուրս է գալիս վայելչագրական ստեղծագործությունների սահմաններից: Թան դինաստիայում Յան Ջենցին ու Լիու Գունցյուանն ուսումնասիրում էին նախորդ ժամանակաշրջանների վայելչագրական ոճերը՝ սեփական վայելչագրական ոճեր ստեղծելու նպատակով: Արդարացի կլինի ասել, որ Յանն ու Լիուն հասան վայելչագրական արվեստի գագաթնակետին, և նրանց միաբերան համարում էին վայելչագրության մեծ վարպետներ: Ի հակադրություն դրա, Ջուն Յաոյի և Ուան Սիջիի ազդեցությունը նվազում էր: Նույն երևույթը դիտարկվում էր նաև պոեզիայի դեպքում: (Սու Շի.

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

«Հուան Յիսիի բանաստեղծությունների ժողովածուի» վերջաբան)

Այն Թիաոյի բանաստեղծություններն ավելի կոկիկ էին գրված, քան նրա նախորդներինը, բայց արդյունքում դրանք պակաս բնական էին ու անշտապ, և դրանցում նկատելի էր Թան բանաստեղծություններին հատուկ տարբերակիչ հատկանիշը: (Թան Գեմ. «*Մյե Լինյուանի, Մյե Հուիլիանի և Մյե Թիաոյի բանաստեղծությունների ժողովածուի*» վերջաբան)

սինթուն-լիբուն 心同理同

Միանման էություն և զգացմունքներ ունեցող մարդիկ կունենան միանման ըմբռնում

Եզրույթը, որը *րեն թուն ցի սին, սին թուն ցի լի* (人同此心 心同此理) արտահայտության կրճատ տարբերակն է, առաջին անգամ առաջարկվել է Լու Ջիույուանի կողմից(1139-1193): *Մինսյունեն* (心学) Լու Ջիույուանի և Ուան Յանմինի (1472-1529) նեո-կոնֆուցիական փիլիսոփայությունը, սովորեցում է, որ մարդկային մտքի բնածին գիտելիքը և տիեզերքի սկզբունքները կապի մեջ են, ճշմարտությունն անդրանցում է ժամանակի ու տարածության սահմանները, միտքն ու Գաոն ընդհանուր են ողջ մարդկության համար: Բոլոր մարդ արարածները՝ անցյալում ու ներկայում, արևելքում կամ արևմուտքում, ունեն ճշմարտության և բարոյականության ընդհանուր ներքին իմացություն, և սա ընդհանուր մարդկային ինքնության հիմքն է: Քանի որ արևմտյան և չինական մշակույթների կապը զգալիորեն սերտացել էր Մին և Յին դինաստիաներից հետո, այս արտահայտությունը փորձում էր բացատրել, որ չնայած Արևելքն ու Արևմուտքը տարբերվում են ակադեմիական մշակույթի առումով, իսկ նոր գիտելիքը-

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

զերազանցապես տարբերվում է չինական էպիստեմոլոգիայից, այնուամենայնիվ դրանք կարող էին ունենալ ընդհանուր հիմնարար մտածողություն:

Մեջբերումներ.

Շատ տարիներ առաջ իմաստունի միտքն ու դատողությունը նույնն էին, ինչ այսօր. սերունդներ հետո իմաստունի միտքն ու դատողությունը նույնը կլինի, ինչ մերը միտքն ու դատողությունը՝ այսօր: (Յան Չյան. «Պարոն Սյանշանի հակիրճ կենսագրություն»)

Միանման էություն և զգացմունքներ ունեցող մարդիկ իմաստություն ձեռք բերելիս կունենան միանման դատողություն: Հետագայում գիտելիքը ոչ միայն կարտացոլի անցյալը, այլև անպայման կզերազանցի այն: (Ջան Ջիդուն. «Սովորելու հորդոր»)

սինյուե-չենֆու 心悦诚服

Լիովին համոզված եղիր և պատրաստակամորեն հետևիր

Եզրույթը նշանակում է ուրախությամբ և պատրաստակամորեն պահպանել առաքինի մարդու բարոյական կերպարն ու վարքագիծը: Մենցիուսը հավատացած էր, որ ուրիշներին համոզելու ճիշտ ճանապարհն էր ոչ թե ստիպել, որ նրանք որևէ բան անեն, այլ դրսևորել ինքնազարգացման և բարոյականության բարձր մակարդակ: Բարձր էթիկական չափանիշներով մարդը երախտագիտությամբ ու հարգանքով ուրիշներին կհամոզի ընդունել իր ուսմունքը կամ քաղաքական գաղափարները:

Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

Մեջբերումներ.

Հարկադրանքով կհաղթես միայն նրանց, ովքեր չափազանց թույլ են և չեն կարող դիմադրել. բարոյական որակները մյուսներին կհամոզեն ուրախությամբ և պատրաստակամորեն հետևել, ինչպես Կոնֆուցիոսի յոթանասուն աշակերտների դեպքում, որոնք ճշմարիտ համոզումներից ելնելով հետևում էին նրան: (*«Մենցիոս»*)

սին 信

Բարեխղճություն

Եզրույթը նշանակում է գործել բարեխղճորեն: Բարեխղճությունը գլխավոր էթիկական չափանիշներից մեկն է, որը պետք է պահպանել՝ հասարակության մեջ հաստատվելու համար: Մակայն մարդը պիտի համապատասխանի էթիկական սկզբունքներին նաև խոստումը հարգելու առումով: Եթե խոստումը դեմ է էթիկական սկզբունքներին, պետք չէ կուրորեն կատարել այն: Կոնֆուցիականությունն ընդգծում է բարեխղճորեն գործելու կարևորությունը թե՛ կառավարիչների, թե՛ մարդկանց դեպքում: Կառավարիչը միշտ պետք է կատարի ժողովրդին տված խոստումները, որ ժողովուրդն էլ կատարի իր հրամանները. անհրաժեշտ է անկեղծ ու ճշմարտախոս լինել ընկերների հանդեպ:

Մեջբերումներ.

Կոնֆուցիոսն ասում էր. «Ինչպե՞ս կարող է ցուլն առաջ տանել վագոնը, եթե չկա լուծ, կամ ձինտեղից շարժել սայլը, եթե չկա լծակամար: Ի՞նչ օգուտ մարդուց, եթե նա գործում է

Չինական ստորի եւ մշակույթի հիմնական հասկացություններ

առանց բարեխղճության»: (*«Անալեկրներ»*)

Մենցիուսն ասաց. «Առաքինի մարդը պարտավոր չէ կատարել իր բոլոր խոստումները կամ անել այն, ինչ ասում է: Կարևորն այն է, որ նրա բառերն ու արարքները համապատասխանեն էթիկական սկզբունքներին»: (*«Մենցիուս»*)

սին ջու շեն շեն 形具神生

Ֆիզիկական ձևը ծնունդ է տալիս հոգուն

Երբ մարդու ֆիզիկական կերպարը լիարժեքորեն ձևավորված է, զարգանում է համապատասխան հոգևոր գործունեություն: Այստեղ «ձև» բառը վերաբերում է մարդ արարածի ֆիզիկական ձևին, իսկ «հոգևորը» ամենաբազմազան մտավոր գործունեությունն է, ներառյալ զգացումներն ու գիտակցությունը: Մունցին (մթա. 313?-238) մատնանշում էր, որ մարդու ֆիզիկական ձևն ու հոգին, ինչպես մնացած ամեն ինչ, զարգանում են բնականոն հունով, երկնքի շարժման ընթացքում: Հոգին ծնվում է մարդ արարածի ֆիզիկական ձևավորման արդյունքում: Լիարժեք ֆիզիկական ձևը հոգու առաջացման անհրաժեշտ պայման է: Մարդու հոգին գոյություն ունի նրա ֆիզիկական ձևի ներսում:

Մեջբերումներ.

Երբ բնության գործառույթները հաստատվում ու գործարկվում են, ի հայտ է գալիս նրա ֆիզիկական ձևը, և ծնվում է հոգին: Մերն ու ատելությունը, բերկրանքն ու բարկությունը, ինչպես նաև վիշտն ու ուրախությունը ձևավորվում են մարդու ֆիզիկական ձևի մեջ և կոչվում են բնական զգացումներ: (*«Մունցի»*)

սինֆեն 性分

Բնական հատկանիշներ

Եզրույթը վերաբերում է այն բնորոշ գծերին ու սահմանափակումներին, որոնք սահմանված են բոլոր երևույթների ներքին էությանը: Արևմտյան Չին դինաստիայի գիտնական Գուո Սյանը (252-312) նշում էր, որ ցանկացած մարդ կամ առարկա ունի իրեն հատուկ բնական հատկանիշներ, ինչպիսիք են առարկայի չափսը և ձևը, մարդու կյանքի տևողությունը, ինտելեկտը կամ դրա բացակայությունը: Մարդու կամ առարկայի բնական հատկանիշները բնածին են, հետևաբար՝ անփոփոխ: Բոլոր իրերը պետք է գոհանան իրենց բնական հատկանիշներով: Եթե մարդիկ և առարկաները ապրեն սեփական էության համաձայն և գործեն բնական հատկանիշների շրջանակում, կարող են վայելել շարժման անխոչընդոտ ազատությունը:

Մեջբերումներ.

Մարդիկ և առարկաներն ունեն բնական հատկանիշներ ու սահմանափակումներ, որոնք նրանք չեն կարող անտեսել կամ փոխել: (Գուո Սյան. «Չուսնցիի» ծանոթագրություններ)

սյույան-շենսի 休養生息

Ուշքի գալ հասարակական տեղաշարժերից և վերականգնել արտադրությունը / Չարգացնել տնտեսությունն ու ավելացնել բնակչությունը

Եզրույթը նշանակում է, որ պատերազմին կամ հասարակական ցնցումներին հաջորդող խաղաղության ժամանակաշրջանում տնտեսությունն ու բնակչությունը կարող են վերականգնվել ու բազմապատկվել: Գործնականում սա նշանակում է, որ միապետը պիտի կրճատի հարկերը և հարկադիր աշխատանքը, աջակցի գյուղատնտեսության ոլորտին՝ թույլ տալով, որ բնակչությունն ավելանա, կյանքը վերադառնա բնականոն հունի, իսկ հասարակությունն ուշքի գա: Այս գաղափարը որպես կառավարման ռազմավարություն առաջին անգամ հայտնվել է Հան դինաստիայի սկզբում՝ նախորդ Յին դինաստիայի հետ պատերազմների ավերածություններից հետո: Մինչ Հան դինաստիայի հաստատումը երկիրն ամայացել էր, բնակչությունը՝ սարսափելի նվազել: Այս քաղաքականությունը հնարավորություն տվեց հասարակությանը աստիճանաբար վերականգնվել, իսկ ազգին՝ աճել ու ավելանալ: Այդուհետև «զարգացնել տնտեսությունն ու ավելացնել բնակչությունը» գաղափարը Չինաստանի պատմության ընթացքում դարձավ կառավարման կարևոր սկզբունք: Երբեմն այն կիրառվում էր դժկամորեն՝ հատուկ հանգամանքների պատճառով, երբեմն ակտիվորեն՝ որպես առատաձեռն կառավարման դրսևորում, երբեմն էլ՝ որպես երկուսի համադրություն: Սա «ժողովուրդը պետության հիմքն է» հասարակական և քաղաքական սկզբունքի կոնկրետ կիրառությունն է:

Մեջբերումներ.

Հուտ Գուանը հասկանում էր, որ երկրի համար ամենակարևորն է՝ ժամանակ տալ, որ բնակչությունը վերականգնվի և բազմապատկվի՝ կրճատելով հարկերը և հարկադիր աշխատանքը: («Հան դինաստիայի պատմությունը»)

Հան դինաստիայի սկզբնական շրջանում կառավարիչները վերացրին նախորդ Ցին դինաստիայի բիրտ օրենքները՝ վերականգնվելու և ավելանալու համար ժամանակ տրամադրելով ժողովրդին: Հան դինաստիայի Ուեն կայսրը վարում էր հարգալից, շրջահայաց և խնայող քաղաքականություն, որը շարունակեց կայսր Չինը: Այսպիսով, այս կառավարման հիսուն-վաթսուն տարիներից հետո հասարակական մթնոլորտը բարելավվեց, մարդիկ դարձան պարկեշտ և ազնիվ: («Հան դինաստիայի պատմությունը»)

սիուցի-լիչեն 修辭立誠

Վստահություն շահել բառերի ճիշտ ընտրության միջոցով

Եզրույթը նշանակում է վստահություն շահելխոսքի զգույշ ընտրության միջոցով: Չինարեն *սիու* (修) տառանշանը նշանակում է բառերի ու արտահայտությունների շրջահայաց ընտրություն, պատմություն գրելիս տեքստի տրամաբանական դասավորություն. ոմանք հավատացած են, որ այն նաև նշանակում է մարդու մտքի զարգացում: Չինարեն *ցի* (辭) տառանշանը նշանակում է այն, ինչ ասում է մարդը, իսկ ոմանք այն մեկնաբանում են՝ որպես հանրային գործերի կառավարում և վարվելակերպի լավ կանոնների զարգացում: Չինարեն *լիչեն* (立誠) արտահայտությունը նշանակում է

